

5

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
2021

Luys



Lnyju®



ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ  
ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

## ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	2
ՄԱՍ 1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՆ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ....	4
1.1. Բնակչության եկամուտներ և աշխատավարձ.....	4
1.2. Կենսաթոշակներ և այլ նպաստներ .....	16
1.3. Աղքատության մակարդակ .....	19
ՄԱՍ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ 2021Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	24
ՄԱՍ 3. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐԱԴՌՔՍԸ .....	28
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	31

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱՄՀ</b>	Արժույթի միջազգային հիմնադրամ
<b>ԱՄՆ</b>	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
<b>ԱՍԸՆԴ</b>	Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ԿԲ</b>	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
<b>ՆԷՊ</b>	Նվազագույն էներգետիկ պահանջ
<b>ՊԵԿ</b>	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
<b>ՍԳԻ</b>	ՀՀ սպառողական գների ինդեքս
<b>ՎԿ</b>	ՀՀ վիճակագրական կոմիտե
<b>ՖՆ</b>	ՀՀ ֆինանսների նախարարություն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին COVID-19-ի համավարակի պատճառով Հայաստանի Հանրապետությունում կիրառված սահմանափակումները, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների 44-օրյա պատերազմը տնտեսական և քաղաքական ոլորտներում ունեցած ազդեցությունից բացի, էական ազդեցություն են ունեցել նաև հասարակության սոցիալական վիճակի վրա: 2018 թվականի իշխանափոխությունից հետո կիրառված ոչ հստակ սոցիալական քաղաքականության հետ մեկտեղ, այս երկու արտակարգ իրադարձությունները չէին կարող ազդեցություն չունենալ նաև բնակչության եկամուտների և կենսամակարդակի վրա:

Միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումների համաձայն՝ բնակչության կենսամակարդակը կամ կյանքի որակը կարող է ներառել բազմաթիվ գործոններ, այդ թվում՝ առողջապահական, շրջակա միջավայրի, կրթական, կենցաղային պայմանները և այլն: Այնուամենայնիվ, սույն հետազոտությունում հիմնական ուշադրությունը կդարձվի բնակչության կենսամակարդակը բնորոշող հիմնական տարրերի՝ եկամուտների և սպառողական ծախսերի վրա:

Կվորձենք ներկայացնել ՀՀ բնակչության 2017-2021թթ. եկամուտները, գնահատել եկամուտների մակարդակի փոփոխությունները, պատճառները և դրանց ազդեցությունը կենսամակարդակի վրա, ինչպես նաև քննարկել բնակչության եկամուտների բարձրացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության քաղաքականությունը, խոստումները և իրական արդյունքները:

Իշխանափոխությունից հետո ՀՀ նորաստեղծ կառավարությունը հայտարարեց ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացու կերտման հրամայականը, որի առանցքային գործոններից համարվեցին բնակչության կենսամակարդակի բարձրացումը, եկամուտների առավել հավասար և արդար բաշխումը, աղքատության հաղթահարումը, ծայրահեղ աղքատության վերացումը և սոցիալական ապահովության ամրապնդումը:

Բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, հավասարաչափ բաշխմանը, սոցիալական արդարության հաստատմանը և աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրային մոտեցումներն իրենց արտահայտությունն են գտել 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին ներկայացված «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում և 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ<sup>1</sup> ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» փաստաթղթում:

2021 թվականի արտահերթ ընտրություններից հետո ՀՀ կառավարությունը ներկայացրեց 2021-2026թթ. ծրագիրը (ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշում<sup>2</sup>), որտեղ նույնպես առկա են վերոհիշյալ խնդիրներին վերաբերող դրույթներ:

Այսպիսով, կենսամակարդակի բարելավմանը միտված դրույթները առկա են, սակայն պետք է տալ հստակ գնահատական, թե ինչ փոփոխություններ կատարվեցին, ինչ բարեփոխումներ իրականացվեցին և ինչ արդյունքներ ունենք այսօր: Արդյո՞ք հայ մարդու կենսամակարդակը Հայաստանի Հանրապետությունում բարելավվեց:

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281>

<sup>2</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328>

Վերլուծությունը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ և կառուցվածքով.

- Նախ նկարագրվել են իշխանափոխությունից հետո ՀՀ նոր կառավարության խոստումները, դրանց ուղղությամբ կատարված քայլերը և արդյունքները՝ շեշտադրելով եկամուտները ներկայացնող և դրանց վրա ազդող ցուցանիշների վերջին տարիների վիճակագրական տվյալները, դրանց հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև տարբեր ցուցանիշների փոփոխությունների որակը և պատճառները՝ նախաիշխականափոխական և հետիշխանափոխական ժամանակահատվածների<sup>3</sup> համեմատության կտրվածքով:
- Նույն տրամաբանությամբ վերլուծվել են նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի նմանատիպ դրույթները և դրանց իրականացման իրատեսականությունը: Առանձին անդրադարձ է կատարվել նաև պետական և մասնավոր հատվածի եկամուտների փոփոխությունների տարբերություններին և պարզևավճարների հարցին:
- Վերջում ամփոփվել են վերլուծության արդյունքները և կատարվել համապատասխան եզրակացություններ:

<sup>3</sup> Մեզ հետաքրքրող վիճակագրության մեթոդաբանությունը որոշ ցուցանիշների մասով վերջին տարիներին փոփոխվել է, ինչը հնարավորություն չի տալիս ավելի երկար ժամանակահատվածի համադրելի տվյալներ ներկայացնել:

# ՄԱՍ 1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՆ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սկսելով ՀՀ բնակչության եկամուտների աճին ուղղված պետական քաղաքականության և կառավարության խոստումների ուսումնասիրությունը՝ նախ ներկայացնենք այն խոստումները և զարգացումները, որոնք արձանագրվել են իշխանափոխությունից հետո մինչև 2021 թվականի արտահերթ ընտրությունները: Հատուկ ուշադրություն կդարձվի Հայաստանում եկամուտները ներկայացնող ցուցանիշների՝ համախառն տնօրինվող եկամտի, աշխատանքի վարձատրության, կենսաթոշակների, տարբեր նպաստների, դրամական փոխանցումների, ինչպես նաև աղքատության և այլ համապատասխան հասկացություններին և ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության առանձնահատկություններին, քանի որ վերոհիշյալ որոշ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը վերջին տարիներին փոփոխվել է, և հաճախ հասարակության շրջանում, անգամ մասնագիտական շրջանակներում խառնաշփոթ է առաջացնում:

Սույն վերլուծությունում մենք հիմք ենք ընդունելու և համեմատելու ենք ընդունված մեթոդաբանությամբ հաշվարկված և հրապարակված պաշտոնական վիճակագրական տվյալները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՎԿ) կողմից կիրառվող հասկացությունները<sup>4</sup>:

## 1.1. Բնակչության եկամուտներ և աշխատավարձ

Ուսումնասիրելով ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը իշխանափոխությունից հետո՝ կարելի է արձանագրել, որ բնակչության եկամուտներին վերաբերող դրույթները հատվածական են և հիմնականում չեն պարունակում հստակ և չափելի ցուցանիշներ:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ փաստաթղթում հստակ ընդգծվում են արժանապատիվ եկամուտներ ձևավորելու, աշխատավարձեր, կենսաթոշակներ, սոցիալական այլ նպաստներ բարձրացնելու և աղքատությունը էապես նվազեցնելու մտադրությունները և խոստումները:

- **5.2. Աղքատության հաղթահարում, սոցիալական աջակցություն.** *Արժանապատվության և երջանկության զգացողության մեջ առաջնային նշանակություն ունի սոցիալական ապահովությունը: Այս առումով կառավարության համար գերակա է լինելու բնակչության կենսամակարդակի էական բարելավումը:*
- **5.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ.** *...Տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա ...աշխատավարձերի բարձրացումը... Ջրաղվածությունը քաղաքացուն պետք է երաշխավորի արժանապատիվ եկամուտներ:*
- **4.2. ԱՂՔԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.** *...Հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական*

<sup>4</sup> Տես՝ [https://armstat.am/file/article/sv\\_12\\_20a\\_6300.pdf](https://armstat.am/file/article/sv_12_20a_6300.pdf), <https://armstat.am/file/doc/99520928.pdf> և <https://armstat.am/file/doc/99521168.pdf>

**ցուցանիշները, կիրականացվի նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում:<sup>5</sup>**

Վերոհիշյալ խոստումներով հայտարարվում է, որ տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա նաև աշխատավարձերի բարձրացումը, և գերակա է լինելու բնակչության կենսամակարդակի էական բարելավումը, ինչպես նաև քաղաքացուն պետք է երաշխավորվեն արժանապատիվ եկամուտներ:

Մինչև խոստումների ուղղությամբ իրականացված քայլերին և արդյունքներին անցնելը, հարկ ենք համարում անդրադառնալ նշված դրույթների բնույթին:

Նախ, հասկանալի չէ, թե ինչ են նկատի ունեցել ծրագիրը մշակողները «արժանապատիվ եկամուտներ» հասկացությունն օգտագործելիս: Արժանապատիվ եկամուտները տնտեսագիտական կատեգորիա չէ և հնարավոր չէ գնահատել եկամուտների 10, 20 կամ 50 տոկոս աճի արժանապատվության չափը:

Մյուս կողմից՝ հասկանալի չէ, թե ինչ մեխանիզմներով կամ գործիքներով էր կառավարությունը բարձրացնելու աշխատավարձերը, հատկապես մասնավոր հատվածում, որտեղ աշխատավարձի բարձրացումը հիմնականում պետք է պայմանավորված լինի արդյունավետության կամ արտադրողականության աճով: Իհարկե, եթե խոսքը չի գնում պետական ծառայողների եկամուտների տարբեր խրախուսանքների (պարգևավճարների) միջոցով անընդհատ բարձրացման մասին, ինչին առանձին կանդիդատանք 3-րդ մասում:

Միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցման համաձայն՝ պետությունը մասնավոր հատվածի աշխատավարձերի բարձրացման վրա կարող է ազդել՝ հիմնականում ապահովելով բարձր տնտեսական աճ կամ խրախուսելով ընկերությունների արտադրողականության աճը, օրինակ՝ օգնելով ընկերությունների տեխնոլոգիական վերազինմանը:

Այս տեսանկյունից վերջին տարիներին չի ապահովվել բարձր տեմպերի տնտեսական աճ:

*Աղյուսակ 1. ՀՆԱ իրական աճը և ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2017-2020թթ. և 2021թ. հունվար-հունիս կտրվածքով, %<sup>6</sup>*

	2017	2018	2019	2020	2021-6
<b>ՀՆԱ-ի իրական աճի ինդեքս, %</b>	107,5	105,2	107,6	92,6	96,7
<b>Ներդրումներ/ՀՆԱ %</b>	18,4	22,4	17,4	17,9	7,6

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

ՀՆԱ իրական աճը վերջին երեք տարիներին կազմել է շուրջ 5%: Արդյունքում և՛ եկամուտները, և՛ աշխատավարձերը էական աճ չեն գրանցել: Վերջինիս գումարվում է նաև ներդրումներ/ՀՆԱ-ի ցածր մակարդակը, ինչը պայմանավորված է նաև վերջին տարիներին պետական բյուջեի կապիտալ ծախսերի նվազմամբ կամ թերակատարմամբ<sup>7</sup>: Հետաքրքիր է,

<sup>5</sup> ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

<sup>6</sup> <https://minfin.am/website/images/files/c30e4efd.xlsx>

<sup>7</sup> Կապիտալ ծախսերի թերակատարման մասին շատ է խոսվել, օրինակ՝ տե՛ս <https://luis.am/img/artpic/small/b36a094cfc61517eb2dfStatebudget-01.07.2021.pdf>

որ այս մոտեցումը չի կորելացվում կառավարության ծրագրում հայտարարված՝ տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակներից մեկի՝ աշխատավարձերի բարձրացման մտադրության հետ:

Վերոհիշյալ ենթադրությունները ամրապնդվում են նաև եկամուտների և սպառողական ծախսերի վերջին տարիներին արձանագրված վիճակագրական արդյունքներով:

*Աղյուսակ 2. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների և սպառողական ծախսերի կազմը և կառուցվածքը, ՀՀ դրամ (2016-2019թթ.)*

	2016	2017	2018	2019*
<b>Բոլոր տնային տնտեսությունները միջինը մեկ շնչի հաշվով, ամսական դրամ</b>				
<b>Դրամական եկամուտները, ընդամենը այդ թվում՝</b>	<b>56 544</b>	<b>58 474</b>	<b>61 047</b>	<b>61 076</b>
Աշխատանքային եկամուտներ	36 993	37 773	39 165	37 733
Սոցիալական տրանսֆերտներ	9 569	9 932	9 945	10 046
Եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	2 955	3 491	4 509	5 125
Այլ դրամական մուտքեր	7 027	7 278	7 428	8 172
<b>Սպառողական ծախսեր այդ թվում՝</b>	<b>43 978</b>	<b>44 413</b>	<b>45 788</b>	<b>47 324</b>
Պարենային ապրանքների (ներառյալ՝ ծխախոտը) վրա	20 115	20 416	20 471	20 955
Ոչ պարենային ապրանքների վրա	8 732	8 497	8 644	11 327
Ծառայությունների վրա	15 131	15 500	16 673	15 042

Աղբյուր՝ ՎԿ

\*Սույն նյութի պատրաստման ժամանակ ՎԿ կողմից դեռևս չէին հրապարակվել 2020թ. ցուցանիշները:

Տնային տնտեսությունների եկամուտների և սպառողական ծախսերի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019թ. մեկ շնչի հաշվով եկամուտները 2018թ. համեմատ գրեթե չեն փոխվել, սակայն հատկանշական է, որ նվազել են աշխատանքային եկամուտները, և ավելացել են եկամուտները հիմնականում վաճառքներից և այլ մուտքերից: Աշխատանքային եկամուտների նվազումը կարող է պայմանավորված լինել կա՛մ աշխատավարձերի, կա՛մ աշխատողների քանակի նվազմամբ:

Ինչ վերաբերում է սպառողական ծախսերին, ապա 2019թ., 2018-ի համեմատ, ընդհանուր առմամբ դրանք աճել են 3,4%-ով, սակայն շուրջ 9,8%-ով նվազել են ծառայությունների վրա ծախսերը: Հատկանշական է, որ ծախսերն աճել են եկամուտների անփոփոխ մակարդակի պարագայում: Իսկ ծառայությունների վրա ծախսերի շուրջ 10% նվազումը, ամեն դեպքում, չի կարող խոսել բնակչության կենսամակարդակի բարձրացման մասին:



Աղյուսակ 3. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները և սպառողական ծախսերը, ընդհանուրի նկատմամբ %, 2016-2019թթ.\*

	2016	2017	2018	2019
<b>Դրամական եկամուտները, ընդամենը այդ թվում՝</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
Աշխատանքային եկամուտներ	65,5	64,6	64,1	61,8
Սոցիալական տրանսֆերտներ	16,9	17,0	16,3	16,4
Եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	5,2	6,0	7,4	8,4
Այլ դրամական մուտքեր	12,4	12,4	12,2	13,4
<b>Սպառողական ծախսեր այդ թվում՝</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
Պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտը) վրա	45,7	45,9	44,7	44,3
Ոչ պարենային ապրանքների վրա	19,9	19,2	18,9	23,9
Ծառայությունների վրա	34,4	34,9	36,4	31,8

Աղբյուր՝ ՎԿ

\*Սույն նյութի պատրաստման ժամանակ ՎԿ կողմից դեռևս չէին հրապարակվել 2020թ. ցուցանիշները:

Նույն եզրակացությունն է հուշում նաև եկամուտների և սպառողական ծախսերի տարբեր տարրերի մասնաբաժինը, որով փաստվում է եկամուտներում աշխատանքային եկամուտների մասնաբաժնի նվազումը, ինչպես նաև սպառողական ծախսերում՝ ծառայությունների վրա ծախսերի մասնաբաժնի կտրուկ նվազումը:

**Արտերկրից ստացված դրամական փոխանցումներ**

Աղյուսակ 4. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և արտերկրի կատարված փոխանցումները 2017-2020թթ., հազ. ԱՄՆ դոլար<sup>8</sup>

	2017	2018	2019	2020	2021-6
<b>Ներհոսք</b>	<b>1 756 485</b>	<b>1 784 876</b>	<b>1 958 573</b>	<b>1 841 679</b>	<b>948 167</b>
աճի տեմպը, %	-	101,6,	109,7	94,0	132,5
այդ թվում՝					
Ռուսաստանի Դաշնություն	1 064 984	1 049 564	1 055 640	824 360	375 043
ԱՄՆ	183 254	223 976	280 911	458 720	260 095
<b>Արտահոսք</b>	<b>989 801</b>	<b>1 188 231</b>	<b>1 454 552</b>	<b>1 267 340</b>	<b>565 285</b>
աճի տեմպը, %	-	120,0	122,4	87,1	108,1
այդ թվում՝					

<sup>8</sup> <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

	2017	2018	2019	2020	2021-6
Ռուսաստանի Դաշնություն	376 109	471 658	425 984	459 593	188 275
ԱՄՆ	193 606	190 918	274 974	162 326	92 316
<b>Զուտ ներհոսք</b>	<b>766 684</b>	<b>596 646</b>	<b>504 020</b>	<b>574 339</b>	<b>382 882</b>
<i>աճի տեմպը, %</i>	-	77,8	84,5	114,0	198,6
այդ թվում՝					
Ռուսաստանի Դաշնություն	688 875	577 906	629 656	364 767	186 768
ԱՄՆ	(10 352)	33 057	5 937	296 394	167 780

Աղբյուր՝ ԿԲ

Վերոհիշյալ տվյալներից պարզ է դառնում, որ արտերկրից կատարված փոխանցումների ներհոսքը առավելագույնի է հասել 2019թ., սակայն նույն ժամանակահատվածում կտրուկ աճել է նաև արտահոսքը, արդյունքում զուտ ներհոսքը 2019 թվականին, վերջին տարիների համեմատ, ամենացածրն է: Ընդհանուր առմամբ զուտ ներհոսքը 2017-ի համեմատ զգալիորեն նվազել է, անգամ 2020թ.՝ պատերազմական ժամանակահատվածում: Այսպիսով, բնակչության ընդհանուր եկամուտների աճի տեսակետից (զուտ ներհոսք), իշխանափոխությունից հետո գրանցվել է բացասական միտում: Հարկ է նշել, որ 2020թ. կտրուկ նվազել է ներհոսքը հիմնական «դոնոր» ՌԴ-ից, ինչը կարելի է բացատրել հիմնականում COVID-19-ի սահմանափակումներով պայմանավորված արտագնա աշխատանքների մեկնողների շատ ավելի քիչ ծավալներով: Հետաքրքրական են նաև արտահոսքի մեծացող տեմպերը, ինչը դժվար է պայմանավորել արտերկրի աշխատանքային եկամուտների տեղափոխման կամ «օգնության» նպատակով, ինչպես ներհոսքի պարագայում: Կարելի է եզրակացնել, որ արտահոսքը պայմանավորված է արտերկրում ներդրում կատարելու (օրինակ՝ անշարժ գույք ձեռքբերելու) կամ ունեցվածքի (երբեմն կապիտալի) այս ձևով արտասահման տեղափոխելու հետ, ինչն իր հերթին կարող է խոսել մեր երկրում ներկայումս ներդրումներ կատարելու տեսակետից, մեղմ ասած, ոչ բարենպաստ վիճակի մասին: Առավել ևս, որ ՌԴ-ից և ԱՄՆ-ից ներհոսքը կազմում է ընդհանուր ներհոսքի միջին հաշվով շուրջ 70%-ը, իսկ արտահոսքը՝ շուրջ 50%:

**Աշխատանքի վարձատրություն**

Աղյուսակ 5. Միջին ամսական անվանական աշխատավարձը 2017-2021թթ. , ՀՀ դրամ

	2017 <sup>9</sup>	2018 <sup>10</sup>	2019 <sup>11</sup>	2020 <sup>12</sup>	2021-6 <sup>13</sup>
<b>Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ</b>	<b>194 259</b>	172 357	182 750	189 758	196 440

<sup>9</sup> <https://armstat.am/file/doc/99506848.pdf>  
<sup>10</sup> <https://armstat.am/file/doc/99512073.pdf>  
<sup>11</sup> <https://armstat.am/file/doc/99517553.pdf>  
<sup>12</sup> <https://armstat.am/file/doc/99523043.pdf>  
<sup>13</sup> <https://armstat.am/file/doc/99525293.pdf>

	աճի տեմպը, %	102.9	103,8	105,8	103,9	105,4
<b>պետական</b>		<b>163 841</b>	<b>147 362</b>	<b>161 789</b>	<b>170 265</b>	<b>168 347</b>
	աճի տեմպը, %	100.5	101,6	108,4	105,3	103,9
<b>ոչ պետական</b>		<b>230 611</b>	<b>186 719</b>	<b>193 288</b>	<b>199 031</b>	<b>209 937</b>
	աճի տեմպը, %	103.6	104,0	103,8	103,0	105,9

*Աղբյուր՝ ՎԿ*

Միջին ամսական անվանական աշխատավարձի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անվանական աշխատավարձը վերջին տարիներին աճել է միջին հաշվով շուրջ 4,5%-ով, սակայն հաշվառման աղբյուրի փոփոխության պատճառով<sup>14</sup> այն, ըստ ՎԿ-ի, համադրելի չէ 2017թ. տվյալների հետ:

Այնուամենայնիվ, միջին ամսական աշխատավարձը 2018թ. կազմել է 172.727 դրամ<sup>15</sup> նախորդ տարվա համեմատ աճելով 4%-ով, 2019թ.՝ 182.673 դրամ՝ աճելով 5,8%-ով, իսկ 2020թ.՝ 189.716 դրամ՝ աճելով 3,9%: Ի դեպ՝ համանման տոկոսներով անվանական աշխատավարձն աճել է նաև նախորդ ժամանակահատվածներում:

Այս ոչ էական աճերը արձանագրվել են հիմնականում պետական հատվածի աշխատավարձերի հաշվին: Հատկանշական է, որ մինչև իշխանափոխությունը միջին ամսական անվանական աշխատավարձերի աճը հիմնականում ոչ պետական հատվածի հաշվին էր արձանագրվում կամ գոնե աճը ոչ պետականում, պետականի համեմատ, առաջանցիկ էր (բացառությամբ սակավաթիվ դեպքերի, երբ օրենքով բարձրացվում էր պետական ծառայողների վարձատրությունը):

*Աղյուսակ 6. Իրական աշխատավարձի ինդեքսը 2018-19թթ.<sup>16</sup>, %*

	2018	2019	2020
<b>Իրական աշխատավարձի ինդեքս</b>	101,5	104,3	102,7 <sup>17</sup>

*Աղբյուր՝ ՎԿ*

Ինչ վերաբերում է իրական աշխատավարձին, ապա հաշվի առնելով գնաճի մակարդակը՝ իրական աշխատավարձի աճը 2018-2020թթ. ավելի փոքր է եղել, համապատասխանաբար՝ 1,5, 4,3 և շուրջ 2,7%:

Ավելին, մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը 2018-2020թթ. աճել է համապատասխանաբար՝ 4,0, 3,8 և 3,0%-ով (իրական աճը կտատանվի 1-2%-ի շուրջ):

<sup>14</sup> ՀՀ ՎԿ-ն 2018թ. հունվարից դադարեցրել է ամսական պարբերականությամբ կազմակերպություններից հավաքվող պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների վրա հիմնված աշխատանքի վարձատրության ցուցանիշների հաշվարկը: Ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայումս հիմնվում է ՀՀ ՊԵԿ Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազայի վրա: Ամսական ցուցանիշները ներառում են մեկ և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների (խոշոր, միջին, փոքր և գերփոքր) տվյալները:

<sup>15</sup> Ճշգրտված տվյալներ, <https://armstat.am/am/?nid=12&id=08001>

<sup>16</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020, <https://armstat.am/file/doc/99521168.pdf>

<sup>17</sup> Գնահատական:

Իսկ եթե գումարենք նաև այն հանգամանքը, որ առաջին անհրաժեշտության ապրանքների գների աճը զգալի է եղել (վերջինիս մասին կխոսենք ներքևում), ապա աշխատավարձերի վերոհիշյալ չափերի իրական աճը չի կարող անվանվել էական կամ «արժանապատիվ»:

Այս ոլորտում կառավարության մյուս թիրախը կամ նպատակն է՝ նվազագույն աշխատավարձի բարձրացումը, որը 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ ՀՕ-223-Ն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն 55.000 դրամից բարձրացվել է 68.000 դրամ: Փոփոխության համաձայն՝ աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատողների ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը ևս փոփոխվել է՝ 330 դրամից դառնալով 406 դրամ: Այս փոփոխությունը գործում է 2020թ. հունվարի 1-ից:

Նվազագույն աշխատավարձի բարձրացումն առնչվում է **միայն մինչև 68.000 դրամ ամսական զուտ աշխատավարձ ստացող** և մինչև 406 դրամ ժամային տարիֆային դրույքով վարձատրվող աշխատողներին:

Ոլորտում իրական վիճակը հասկանալու համար հարկ ենք համարում անդրադառնալ նաև գնաճի և դրամի փոխարժեքի դինամիկային, հատկապես, առաջին անհրաժեշտության ապրանքների գների տատանումների մասով:

Գնաճը 2017-2021թթ.<sup>18</sup>

Ընդհանուր առմամբ, սպառողական գների ինդեքսի փոփոխությունները վերջին տարիներին չեն եղել էական (Աղյուսակ 7), սակայն որոշ ապրանքախմբերի և ծառայությունների մասով արձանագրվել են զգալի փոփոխություններ (սննդամթերք, ալկոհոլային խմիչքներ, տրանսպորտ):

*Աղյուսակ 7. Սպառողական գների ինդեքսը 2018-2021թթ.<sup>19</sup>*

	ԱՍԸՆԴ <sup>20</sup> հատվածներ՝ ըստ երկնիշ դասակարգման	2018	2019	2020	2021-8
<b>00</b>	Սպառողական գների ինդեքս	101,8	100,7	103,7	103,7
<b>01</b>	Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ	101,6	99,7	104,9	104,5
<b>02</b>	Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ	103,9	104,6	110,4	108,4
<b>03</b>	Հագուստ և կոշիկ	100,9	102,5	100,3	103,5
<b>04</b>	Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	100,5	100,9	100,5	100,7
<b>05</b>	Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում	100,7	100,1	103,6	106,8

<sup>18</sup> Հիմք ընդունելով 2019թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության դրամական ծախսումների մասին տվյալները՝ վերանայվել է 2021թ. ՍԳԻ-ի կազմը և կառուցվածքը: 2021 թվականի ՍԳԻ-ի հաշվարկման համար բազիսային ժամանակաշրջան է ընդունվել 2020թ. դեկտեմբեր ամիսը:

<sup>19</sup> [https://armstat.am/file/article/sv\\_06\\_21a\\_130.pdf](https://armstat.am/file/article/sv_06_21a_130.pdf)

<sup>20</sup> Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ:

ԱՍԸՆԴՊՈՒՄ՝ ԸՍՏ ԵՐԿՆԻՉ ԴԱՏԱԿԱՐԳՄԱՆ		2018	2019	2020	2021-8
06	Առողջապահություն	103,7	101,8	103,9	103,6
07	Տրանսպորտ	105,9	102,3	104,7	104,7
08	Կապ	99,4	99,9	100,0	100,8
09	Հանգիստ և մշակույթ	97,6	99,1	99,3	106,4
10	Կրթություն	102,4	103,7	102,0	100,0
11	Ռեստորաններ և հյուրանոցներ	102,8	101,9	101,8	104,4
12	Տարբեր ապրանքներ և ծառայություններ	100,7	99,9	105,5	102,8

*Աղբյուր՝ ՎԿ*

**2018թ. արդյունքներով 12-ամսյա գնաճը** կազմել է 1,8%, ընդ որում՝ սննդամթերքի և ոչ ալկոհոլային ապրանքների (ներառյալ՝ ալկոհոլային խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների աճը համապատասխանաբար կազմել է 1,8%, 3,2% և 0,8%<sup>21</sup>:

Սննդամթերքի և ոչ ալկոհոլային ապրանքների գների աճը հիմնականում պայմանավորվել է «Մսամթերք», «Միրգ», «Յուղեր և ճարպեր», «Ծխախոտ» ապրանքախմբերի գների՝ համապատասխանաբար 8,2%, 10%, 3,1% և 7,9% աճով: Հարկ է նշել, որ «Մսամթերք» ապրանքատեսակներից տավարի մսի գինը աճել է 14,6%-ով, գառան, ոչխարի միսը՝ 8,7%-ով, իսկ թռչնամիսը՝ 4,3%-ով: Ձկնեղենի գների աճը կազմել է 5,4%<sup>22</sup>:

Ոչ պարենային ապրանքների գների բարձր աճը վառելիքի և դեղագործական ապրանքների գների՝ համապատասխանաբար 10,1% և 3,4% աճի պատճառով է: Ընդ որում, առողջապահությունում, բացի դեղագործական ապրանքների գներից, աճել են նաև ամբուլատոր, բժիշկների և բժշկական հետազոտական լաբորատորիաների ծառայությունների գները՝ համապատասխանաբար 5,1%, 4% և 8,9%-ով:

**2019 թվականի ընթացքում 12-ամսյա գնաճը** ցուցաբերել է տատանողական վարքագիծ՝ պայմանավորված բերքի սեզոնայնության տեղաշարժի հետևանքով գյուղմթերքի գների փոփոխություններով<sup>23</sup>: Այսպես, առաջին կիսամյակում գյուղմթերքի գներն աճել են՝ հունիսի վերջին հասնելով 2,5%-ի, իսկ երկրորդ կիսամյակում աստիճանաբար նվազել՝ տարեվերջին կազմելով տ/տ<sup>24</sup> 0,7%: Սեզոնային պարենային ապրանքների գների աճը պայմանավորվել է «Բանջարեղեն» ապրանքախմբի 5,9% աճով:

Գների աճ է արձանագրվել «Հացաբուլկեղեն և ձավարեղեն», «Ծխախոտային արտադրատեսակներ», ինչպես նաև «Վառելիք» ապրանքախմբերում՝ համապատասխանաբար 3,9, 7,5 և 2,8%-ով:

<sup>21</sup> <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202018Q4.pdf>

<sup>22</sup> [https://armstat.am/file/article/cpi\\_12\\_2018.pdf](https://armstat.am/file/article/cpi_12_2018.pdf)

<sup>23</sup> <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202019Q4.pdf>

<sup>24</sup> Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ

**2020 թվականի սկզբում 12-ամսյա գնաճը** պահպանվել է ցածր մակարդակում: 2020-ի երկրորդ եռամսյակից սկսած արձանագրվել է գնաճի որոշակի վերականգնում, ինչն արդյունք է սեզոնային գյուղմթերքի՝ հատկապես մրգի գների որոշակի բարձրացման:

Համաձայն ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջին գնաճի արագացմանը հիմնականում նպաստել է ներմուծված պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճը, որն իր հերթին հիմնականում պայմանավորված է եղել միջազգային շուկաներում պարենային ապրանքների գների աճով, ինչպես նաև դրամի արժեզրկմամբ: Հատկանշական է եղել միջազգային շուկաներում համապատասխան ապրանքների առաջարկի կրճատման հետևանքով ՀՀ տնտեսությունում «Հացաբուլկեղեն և ձավարեղեն», «Յուղեր և ճարպեր» և «Շաքարավազ» ապրանքախմբերի գնաճը:

Իսկ էներգակիրների միջազգային գների ավելացումն իր ազդեցությունն է փոխանցել վառելիքի գների տարեվերջյան աճի վրա: 12-ամսյա գնաճին էական նպաստում է ունեցել նաև դեղագործական ապրանքների գների աճը, ինչը հիմնականում պայմանավորվել է COVID-19-ի ընթացքում դրսևորված բարձր պահանջարկով:

Ըստ ՀՀ ԿԲ-ի<sup>25</sup> 2021թ. օգոստոսին արձանագրվել է 0.4% գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.1% գնանկման դիմաց, որի պարագայում **12-ամսյա գնաճը շարունակել է ավելանալ և ամսվա վերջին կազմել 8.8%**: Վերջին ամիսներին գնաճի կարճաժամկետ արագացումը հիմնականում պայմանավորված է սեզոնային պարենային ապրանքների գների աճով:

**Ըստ ՀՀ ԿԲ կանխատեսումների**<sup>26</sup> նման պայմաններում, մինչև տարեվերջ 12-ամսյա գնաճը կպահպանվի բարձր մակարդակում, այնուհետև իրականացվող զսպող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ներքո **2022-ին կմոտենա նպատակային 4% ցուցանիշին և միջնաժամկետ հատվածում կկայունանա դրա շուրջ**: Միաժամանակ, տնտեսական հեռանկարների մասով դեռևս պահպանվող անորոշությունների ներքո կանխատեսված միջնաժամկետ ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հավասարակշռված են:

Առաջին անհրաժեշտության ապրանքների գնաճի դինամիկան

Չնայած այն հանգամանքին, որ գների ընդհանուր մակարդակը վերջին տարիներին թվում է, թե էականորեն չի բարձրացել, այնուամենայնիվ կարևոր է առանձին ուշադրություն դարձնել առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների՝ հիմնականում սննդամթերքի, բնակարանային ծախսերի, տրանսպորտի և, հաշվի առնելով համաճարակային իրավիճակը, առողջապահական հիմնական ապրանքների և ծառայությունների գների վրա: Նկատի ունենալով, որ բնակչության շուրջ 26%-ն աղքատ է, ինչպես նաև բնակչության պարենային ապրանքների վրա ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի շուրջ 44%-ը, առանձին պարենային ապրանքների գները շատ ավելի անմիջական և ուղիղ են ազդում բնակչության կենսամակարդակի վրա, քան գների ընդհանուր մակարդակը:

*Աղյուսակ 8. Առանձին ապրանքների և ծառայությունների գների փոփոխությունը 2018-2021թթ., % նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ*

<sup>25</sup> [https://www.cba.am/AM/News/Pages/news\\_09-06-21.aspx#sthash.LEV6lj6f.dpbs](https://www.cba.am/AM/News/Pages/news_09-06-21.aspx#sthash.LEV6lj6f.dpbs)  
<sup>26</sup> [https://www.cba.am/AM/News/Pages/news\\_09-06-21.aspx#sthash.LEV6lj6f.dpbs](https://www.cba.am/AM/News/Pages/news_09-06-21.aspx#sthash.LEV6lj6f.dpbs)

Ծածկագիր	ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ	2018	2019	2020	2021-8
<b>00</b>	<b>Սպառողական գների ինդեքս</b>	<b>1,8</b>	<b>0,7</b>	<b>3,7</b>	<b>8,8</b>
<b>01</b>	<b>Մենդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ</b>	<b>1,6</b>	<b>-0,3</b>	<b>4,9</b>	<b>15,1</b>
01.1	Մենդամթերք	1,7	-0,3	5,1	15,6
01.1.1	Հացարուկեղեն և ձավարեղեն (Կ)	0,7	3,9	7,4	9,0
01.1.1.1	Բրինձ (Կ)	1,0	1,9	9,6	13,7
01.1.1.2	Այլուր և այլ ձավարեղեն (Կ)	-1,7	4,7	11,5	9,1
01.1.1.3	Հաց (Կ)	1,8	4,5	7,3	9,0
01.1.1.6	Մակարոնեղեն (Կ)	-0,6	7,9	6,4	5,1
01.1.2	Միս (Կ)	8,2	-3,4	-0,6	9,9
01.1.2.1	Միս տավարի և հորթի (Կ)	14,6	-5,1	-4,4	0,7
01.1.2.2	Միս խոզի՝ թարմ, պաղեցրած, սառեցրած (Կ)	-1,3	-14,2	-5,8	40,3
01.1.2.3	Միս գառան, ոչխարի և այծի (Կ)	8,7	-0,2	4,1	7,1
01.1.2.4	Թռչնամիս (հավ, հնդկահավ և այլ)	4,3	-2,8	6,5	23,5
01.1.3	Ձուկ և ծովամթերք (Կ)	5,4	-4,7	-2,3	25,5
01.1.3.1	Ձուկ՝ թարմ կամ պաղեցրած (Կ)	5,7	-5,7	-3,0	28,7
01.1.4	Կաթնամթերք, պանիր և ձու (Կ)	-2,3	-2,0	5,8	12,2
01.1.4.1	Անարատ կաթ (Կ)	1,3	-0,5	1,5	1,1
01.1.4.3	Կաթ պահածոյացված (Կ)	3,2	1,1	0,8	10,6
01.1.4.4	Յոգուրտ, մածուն (Կ)	0,7	1,3	3,0	3,4
01.1.4.5	Պանիր և կաթնաշոռ (Կ)	-2,3	-3,2	0,8	3,6
01.1.4.7	Ձու (Կ)	-6,5	-4,0	18,5	46,5
01.1.5	Յուղեր և ճարպեր (Կ)	3,1	-4,9	13,1	29,1
01.1.5.1	Կարագ (Կ)	2,0	-5,4	2,5	14,5
01.1.5.2	Մարգարին և այլ բուսական յուղեր (Կ)	4,0	-2,7	-0,5	7,7
01.1.5.3	Ձիթապտղի յուղ (Կ)	5,2	1,2	0,7	4,9
01.1.5.4	Այլ սննդային յուղեր (Կ)	3,9	-5,9	30,0	55,0
01.1.6	Մրգեր (Կ)	10,0	-2,7	11,4	-8,7
01.1.7	Բանջարեղեն (Կ)	-6,3	5,9	2,8	66,4
01.1.7.1	Բանջարեղեն՝ տերևավորներ, ցողունավորներ	-8,2	8,8	8,3	82,5
01.1.7.4	Կարտոֆիլ (Կ)	-3,2	0,1	-23,1	58,0
01.1.8.1	Շաքար (Կ)	-11,7	-12,4	38,1	36,2
01.1.8.4	Հրուշակեղեն (Կ)	-7,7	-1,4	-0,1	10,3
01.1.9.3	Մանկական սնունդ (Կ)	1,3	-0,2	1,2	9,4
01.2.1.1	Սուրճ (Կ)	-0,9	-1,9	0,4	5,4
01.2.1.2	Թեյ (Կ)	0,6	-1,9	-1,0	4,9
<b>02</b>	<b>Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային</b>	<b>3,9</b>	<b>4,6</b>	<b>10,4</b>	<b>9,3</b>

Ծածկագիր	ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ	2018	2019	2020	2021-8
02.1	Ալկոհոլային խմիչքներ (Կ)	1,5	2,8	12,3	8,7
02.2	Ծխախոտային արտադրատեսակներ (Կ)	7,9	7,5	6,6	10,4
<b>04</b>	<b>Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ</b>	<b>0,5</b>	<b>0,9</b>	<b>0,5</b>	<b>1,4</b>
04.4.1	Ջրամատակարարում (Ծ)	0,0	0,0	0,0	0,0
04.4.2	Աղբի հավաքում (Ծ)	4,7	1,5	5,8	0,0
04.4.3	Կոյուղի (Ծ)	0,0	0,0	0,0	0,0
04.5.1	Էլեկտրաէներգիա (Ծ)	0,1	0,1	0,0	1,4
04.5.2	Գազ (Ծ)	-0,6	0,7	-0,2	0,6
04.5.2.1	Գազ բնական, ցանցային (Ծ)	-0,6	0,7	0,1	-0,1
<b>06</b>	<b>Առողջապահություն</b>	<b>3,7</b>	<b>1,8</b>	<b>3,9</b>	<b>5,3</b>
06.1	Դեղագործական ապրանքներ, բժշկական սարքավորանք	3,4	0,2	5,8	9,4
06.1.2	Բժշկական նշանակության այլ արտադրանք (Մ)	0,9	0,6	13,2	12,2
06.2	Ամբուլատոր ծառայություններ	5,1	4,2	2,8	3,2
06.2.1	Բժիշկների ծառայություններ (Ծ)	4,0	4,0	6,0	6,7
06.2.3.1	Բժշկական հետազոտական լաբորատորիաների ծառայություններ	8,9	4,8	0,8	1,5
06.3	Հիվանդանոցների ծառայություններ (Ծ)	3,3	4,4	1,4	0,8
<b>07</b>	<b>Տրանսպորտ</b>	<b>5,9</b>	<b>2,3</b>	<b>4,7</b>	<b>10,0</b>
07.2.2.1	Դիզելային վառելիք (Կ)	20,4	-5,4	-23,0	44,3
07.2.2.2	Բենզին (Կ)	6,1	-5,6	-12,2	47,5
07.3	Տրանսպորտի ծառայություններ (Ծ)	2,1	1,8	7,1	8,0
07.3.2.2	Մարդատար տրանսպորտի ծառայություններ	3,7	0,0	0,0	1,6
07.3.3	Օդային մարդատար տրանսպորտի	3,9	7,5	35,5	42,7

Աղբյուր՝ ՎԿ

Այսպես, վերջին տարիների և 2021թ. ութ ամիսների ընթացքում էականորեն աճել են հետևյալ, հատկապես՝ աղքատ բնակչության սպառման մեջ մեծ տեղ զբաղեցնող ապրանքների և որոշ ծառայությունների գները. բրինձ՝ ընդհանուր աճ 26,2%, այլուր՝ 23,6%, հաց՝ 22,6%, մակարոնեղեն՝ 18,8%, թոչնամիս՝ 31,5%, ձուկ՝ 25,7%, ձու՝ 54,5%, յուղեր և ճարպեր՝ 40,4%, այլ սննդային յուղեր՝ 83,0%, բանջարեղեն՝ 68,8%, շաքար՝ 50,2%: Աճել են նաև այնպիսի ապրանքների և ծառայությունների գները, ինչպիսիք են ալկոհոլային խմիչքները՝ 25,3%, ծխախոտը՝ 32,4%, դեղագործական ապրանքները՝ 18,8%, բժիշկների ծառայությունները՝ 20,7%, լաբորատոր հետազոտությունները՝ 16,0%, դիզելային վառելիքը՝ 36,3%, բենզինը՝ 35,8%, տրանսպորտի ծառայությունները՝ 19,0%, օդային մարդատար տրանսպորտը՝ 89,6%: Վերոհիշյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը բնակչության գերակշիռ մասի կողմից պարբերաբար կատարվող ծախսերն են:



Դրամի փոխարժեքը 2017-2021թթ.

Վերջին տարիների ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքը հիմնականում եղել է կայուն: Սակայն սկսած 2020 թվականի չորրորդ եռամսյակից մինչև 2021 թվականի երկրորդ եռամսյակ դրսևորվել է տատանողական վարքագիծ՝ պայմանավորված քաղաքական և տնտեսական անորոշություններով: ՀՀ ԿԲ-ն այդ ընթացքում միջամտություններ է կատարել՝ արժութային շուկայում վաճառելով ԱՄՆ դոլար, այդ թվում՝ կիրառելով արժութային սվոփ<sup>27</sup>:

*Աղյուսակ 9. ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ, 2017-2020թթ. և 2021թ. հունվար-հունիս*

	2017	2018	2019	2020	2021-6
ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ժամանակաշրջանի վերջի դրությամբ	484,1	483,8	479,7	522,6	
ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ, միջին տարեկան	482,7	483,0	480,5	489,0	522,1

*Աղբյուր՝ ԿԲ, ՖՆ*

Ինչ վերաբերում է ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքին, ապա այն վերջին տարիներին աճել է, այսինքն՝ տեղի է ունեցել դրամի արժևորում: Միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցում է, որ այլ հավասար պայմաններում արժևորումը դրական ազդեցություն կարող է ունենալ տեղական շուկային ուղղված արտադրությունների վրա և բացասական արտահանմանն ուղղված արտադրությունների վրա: Միաժամանակ, մի կողմից՝ դրամի արժևորումը էժանացնում է ներմուծվող ապրանքները, մյուս կողմից՝ «փոքրացնում» արտասահմանից ուղարկվող գումարները, որոնք ինչպես տեսանք բավականին խոշոր չափերի են հասնում:

*Աղյուսակ 10. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքները (ինդեքսները)<sup>28</sup>, 2017-2021թթ.*

	2017	2018	2019	2020	2020-6	2021-6
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	134,5	140,1	145,0	147,4	152,7	141,9
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	264,1	281,0	301,2	313,8	319,2	296,4

*Աղբյուր՝ ԿԲ*

Գնաճի և փոխարժեքի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնաճը վերջին ժամանակաշրջանում բացասական ազդեցություն է ունեցել բնակչության կենսամակարդակի վրա: Գնաճը վերջին տարիներին եղել է չափավոր, սակայն խնդիրներ են առաջացել վերջին

<sup>27</sup> [https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20overview\\_II\\_2021.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20overview_II_2021.pdf)

<sup>28</sup> Ինդեքսների բացատրությանը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6\\_18.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf)

երկու տարում, հատկապես՝ առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների մասով: Իսկ փոխարժեքի լուրջ տատանում գրանցվել է 2020թ. վերջից 2021թ. սկիզբ ընկած ժամանակահատվածում, որը տարվա երկրորդ մասում արդեն իսկ զսպվել է:

Ամփոփելով եկամուտների և աշխատավարձերի բարձրացմանն ուղղված կառավարության խոստումները, քայլերը և արդյունքները՝ կարելի է փաստել, որ՝

- ՀՀ կառավարությունը, մեծ հաշվով, հատուկ քաղաքականություն չի վարել բնակչության եկամուտների բարձրացման մասով՝ հիմնական հույսը դնելով տնտեսական աճի վրա,
- կառավարության հայտարարած արժանապատիվ եկամուտներ ապահովելու դրույթը չափելի չէ, իսկ մասնավոր հատվածի աշխատավարձերը բարձրացնելու նպատակը անհասանելի՝ պայմանավորված մի կողմից՝ վերջիններս բարձրացնելու մեխանիզմների, մյուս կողմից՝ դրան նպաստող տնտեսական աճի տեմպերի բացակայությամբ,
- թե՛ եկամուտները և թե՛ աշխատավարձերը էական աճ չեն գրանցել: Նվազել են աշխատանքային եկամուտները և ծառայությունների վրա սպառողական ծախսերը (շուրջ 10%), ինչը կարող է խոսել բնակչության կենսամակարդակի անկման մասին,
- բացասական միտումներ են գրանցվել նաև արտերկրից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումներում: Նվազել է զուտ ներհոսքը, հատկապես՝ ՌԴ-ից, մեծացել են արտահոսքի տեմպերը (2019 թվականին հասնելով շուրջ 1.5 մլրդ դոլարի)՝ պայմանավորված արտերկրում ներդրում կատարելու (օրինակ՝ անշարժ գույք ձեռքբերելու) կամ ունեցվածքի (երբեմն կապիտալի) այս ձևով արտասահման տեղափոխելու հետ, ինչն իր հերթին դրականորեն չի բնորոշում ՀՀ ներդրումային միջավայրը և տնտեսական հեռանկարները,
- միջին ամսական անվանական աշխատավարձը աճել է միջին հաշվով համեստ 4.5%, իսկ հաշվի առնելով գնաճի տեմպերը՝ իրական աճը (միջին հաշվով 2-3%) կարելի է գնահատել սիմվոլիկ: Հատկանշական է, որ անգամ այս ոչ էական աճերը եղել են հիմնականում պետական հատվածի աշխատավարձերի հաշվին,
- վերոհիշյալը սրվում է վերջին շրջանում գնաճի ահագնացող տեմպերով, հատկապես՝ առաջին անհրաժեշտության ապրանքների մասով: Կտրուկ աճել են բրնձի, շաքարի, հացի, ձվի, բանջարեղենի, թռչնամսի, յուղերի և այլ կարևորագույն ապրանքների ու ծառայությունների գները, որոնք շատ ավելի անմիջական և ուղղակիորեն են ազդում բնակչության կենսամակարդակի վրա, քան գների ընդհանուր մակարդակը:

## 1.2. Կենսաթոշակներ և այլ նպաստներ

- **Պարբերաբար բարձրացվելու են պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ՝ գնաճի նկատմամբ<sup>29</sup>:**
- **5. Պետական համակարգում հնարավոր խնայողությունների ու եկամուտների նոր աղբյուրների շնորհիվ նախատեսվում ենք մինչև 2023 թվականը կենսաթոշակների բարձրացում<sup>30</sup>:**

<sup>29</sup> ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

<sup>30</sup> «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր:

Հաշվի առնելով, որ կենսաթոշակային համակարգը, դրա բարեփոխումները և նոր իշխանությունների վերաբերմունքը հարցին իշխանափոխությունից առաջ և հետո առանձին վերլուծության թեմա է, այս մասում կուսումնասիրվեն միայն կենսաթոշակների և այլ նպաստների բարձրացման վերաբերյալ ՀՀ կառավարության խոստումները և իրականացված քայլերը:

Համաձայն խոստումների՝ կենսաթոշակները պետք է պարբերաբար բարձրացվեն, սակայն մինչ օրս դա տեղի է ունեցել մեկ անգամ, որի արդյունքում **կենսաթոշակները ավելացել են միջին հաշվով ընդամենը շուրջ 10%-ով**<sup>31</sup>:

Աղյուսակ 11. Նշանակված ամսական կենսաթոշակը, 2016-2020թթ.<sup>32</sup>

	2016	2017	2018	2019	2020
Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը, դրամ	40 397	40 634	40 478	40 424	43 983
Նշանակված իրական ամսական կենսաթոշակի միջին չափը, նախորդ տարվա նկատմամբ, %	99,9	100,6	99,6	99,9	108,8
Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը	16 000	16 000	16 000	16 000	18 000

Աղբյուր՝ 44

Կենսաթոշակների չափերը բարձրացվել են ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1920-Ն որոշմամբ<sup>33</sup>: Նոր կարգավորմամբ 2020 թվականի հունվարի 1-ից սահմանվել է.

- ✓ նվազագույն կենսաթոշակի չափը՝ 26 500 դրամ (25 500 դրամի փոխարեն),
- ✓ աշխատանքային և զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափերը՝ 18 000 դրամ (16 000 դրամի փոխարեն),
- ✓ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար՝ 950 դրամ (800 դրամի փոխարեն) և այլն:

Հաշվի առնելով նաև այս տարիներին գրանցված գնաճը, հատկապես՝ առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների շրջանում, այս ավելացումը կարելի է դիտարկել որպես սիմվոլիկ:

Կենսաթոշակների ոլորտում առկա են նաև այլ խնդիրներ, օրինակ՝ կենսաթոշակի անցնող անձանց աշխատանքային կեղծ ստաժի հավելագրման մասով: Այս հարցը հնարավոր է լուծել թվայնացնելով բոլոր աշխատանքային գրքույկները և ապահովել անհրաժեշտ տեղեկատվական հիմք՝ աշխատանքային կեղծ ստաժի հիման վրա կենսաթոշակի նշանակումները բացառելու համար: Այդ աշխատանքները մեկնարկել են դեռևս 2016 թվականի օգոստոսից և պետք է ավարտվեին 2018 թվականի դեկտեմբերի 31-ին: Սակայն մեկ տարով հետաձգվել է այդ ժամկետը՝ իշխանափոխությունից հետո, որի ընթացքում այն կրկին չի իրականացվել և հետաձգվել է ևս երկու տարով:

<sup>31</sup> <https://www.mlsa.am/?p=24741>

<sup>32</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020, <https://armstat.am/file/doc/99521168.pdf>

<sup>33</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137975>

Վերոհիշյալից պարզ է, որ կենսաթոշակի ավելացումը հեղափոխական ազդեցություն չի ունեցել ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի վրա, սակայն ֆորմալ առումով խոստումը որոշ չափով կատարվել է: Կարծում ենք, որ միջին հաշվով 10% բարձրացումը չի համապատասխանում ՀՀ կառավարության որդեգրած երջանիկ քաղաքացիների կենսամակարդակի էական բարելավման քաղաքականությանը:

Այլ նպաստներ

Ինչ վերաբերում է այլ նպաստներին, ապա դրանք կենսաթոշակի բարձրացման հետ համընթաց որոշակիորեն բարձրացվել են: Այսպես, բարձրացվել է՝

- զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1 600 դրամ (1 500 դրամ).
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը՝
  - ✓ առաջին խմբի հաշմանդամի համար՝ 40 000 դրամ (36 000 դրամի փոխարեն),
  - ✓ երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 30 000 դրամ (26 000 դրամի փոխարեն),
  - ✓ երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 27 000 դրամ (25 500 դրամի փոխարեն).
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 27 000 դրամ (25 500 դրամի փոխարեն).
- երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում՝ 90 000 դրամ (80 000 դրամի փոխարեն).
- ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը՝ դրանք սահմանելով 26 500 դրամ (25 500 դրամի փոխարեն):

*Աղյուսակ 12. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ ստացող ընտանիքների քանակն ու նշանակված ամսական նպաստի միջին չափը, 2017-2020թթ.*

	2017	2018	2019	2020
Ընտանիքների ընդհանուր քանակը, միավոր	105 564	97 601	91 502	92 012
Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող, միավոր	100 288	92 564	86 197	86 927
Եռամսյակային հրատապ օգնություն ստացող, միավոր	5 276	5 037	5 105	5 085
Մեկ ընտանիքի ամսական նպաստի միջին չափը, դրամ	31 350	31 350	31 350	31 350

*Աղբյուր՝ ՎԿ*

Թեև 2019 թվականին նպաստառու ընտանիքների քանակը կտրուկ նվազել է, 2020 թվականին նկատվել է այդ ընտանիքների թվի աճ: Ընդ որում, նպաստառու ընտանիքների քանակի նվազում տեղի է ունեցել սկսած 2016 թվականից և 2020 թվականը միակ ժամանակահատվածն է 2015 թվականից հետո, երբ գրանցվել է նպաստառու ընտանիքների թվաքանակի աճ: Այդ աճը կարող է վկայել բնակչության ընդհանուր սոցիալական վիճակի վատթարացման մասին, ինչը ապացուցվում է նաև այդ տարվա այլ սոցիալական ցուցանիշներով: Հարկ է նշել նաև, որ 2017թ. համեմատ նպաստառուների քանակի նվազումը

ոչ մի կերպ չի ազդել նպաստների չափի վրա, ինչից հետևություն կարելի է անել, որ նպաստառուների խնդիրների նկատմամբ ուշադրությունը չի ավելացել:

Ոչ մի էական փոփոխություն չի արձանագրվել նաև բնակչությանը պետության հատկացրած սոցիալական երաշխիքների՝ հիվանդությունների հետևանքով հաշմանդամության և կրթաթոշակների մասով: Ընդհակառակը՝ հաշմանդամություն ստանալու գործընթացը գործնականում դարձել է համարյա անհնարին:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ համաձայն կառավարության խոստումների՝ կենսաթոշակները պետք է պարբերաբար բարձրացվեին, սակայն մինչ օրս դա տեղի է ունեցել մեկ անգամ, բարձրացումն էլ կազմել է միջին հաշվով շուրջ 10%:

Նույն չափով աճել են նաև որոշ նպաստներ, սակայն 2020թ. աճել է նպաստառուների քանակը, ինչը կարող է վկայել բնակչության ընդհանուր սոցիալական վիճակի վատթարացման մասին: Միաժամանակ, անփոփոխ են մնացել հաշմանդամության նպաստները և կրթաթոշակները:

Հաշվի առնելով, որ իշխանափոխությունից մինչ օրս գների մակարդակը ընդհանուր առմամբ երկնիշ աճ է գրանցվել, հատկապես, կարևորագույն ապրանքների մասով, կենսաթոշակների և նպաստների մեկանգամյա բարձրացումը չի ծածկել անգամ գնաճի ազդեցությունը, ուստի խոցելի խավերի կենսամակարդակը անկում է ապրել և խոստումը կարելի է համարել չկատարված:

### 1.3. Աղքատության մակարդակ

- **Բաժին 4. Մաս 4.2. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.** Կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունը, էապես նվազեցնել աղքատությունը<sup>34</sup>:
- Վերոնշյալ գործողությունները միտված են լինելու հանրապետությունում միջին խավի ձևավորմանը: Մասնավորապես՝ մինչև 2023 թվականը աղքատությունը իջեցնելու ենք առնվազն 10 տոկոսային նիշով՝ վերացնելով ծայրահեղ աղքատությունը ...<sup>35</sup>
- «Աղքատության որոգայթից» խոսափելու համար իրականացնելու ենք աղքատության պարճառների համապարփակ ուսումնասիրություն և ըստ այդմ մշակելու ենք համալիր գործողություններ: **Բարեփոխելու ենք աղքատության նպաստների տրամադրման կարգը:**<sup>36</sup>

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը<sup>37</sup>:

<sup>34</sup> ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

<sup>35</sup> «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14. «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ»:

<sup>36</sup> «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14. «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ», կետ 4:

<sup>37</sup> <https://www.armstat.am/file/doc/99516748.pdf>

2017թ. արդյունքներով աղքատության մակարդակը եղել է 25,7%, այսինքն՝ մինչև 2023թ. այն պետք է հասնի 15,7%-ի:

Ուսումնասիրելով աղքատության վերջին տարիների ցուցանիշները՝ պետք է արձանագրենք, որ 2018 թվականին, այդ թվում՝ 2017 թվականի և տարվա առաջին ամիսների տնտեսական բարձր ցուցանիշների շնորհիվ, աղքատության մակարդակը նվազել է 2,2%-ով, սակայն 2019թ. արդեն այդ ցուցանիշը աճել է շուրջ 3%-ով: Սա նշանակում է, որ երկրի բնակչության գրեթե ամեն չորրորդը ցածր է գտնվել ամսական 42 621 ՀՀ դրամ աղքատության վերին գծից: Ծայրահեղ աղքատության ցուցանիշը 2018թ. կազմել է 1,0% և 2017թ. համեմատ նվազել է 0,4%-ով:

Աղյուսակ 13. Աղքատությունը նկարագրող ցուցանիշները ՀՀ-ում, 2017-19թթ.<sup>38</sup>

	2017	2018	2019 <sup>39</sup>
Աղքատության մակարդակը, %	25,7	23,5	26,4
որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը, %	1,4	1,0	1,4
Աղքատության խորություն, %	4,4	4,2	10,1
Աղքատության սրություն, %	1,2	1,1	3,4
Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ	24 268	24 827	23 763
Եկամուտների կենտրոնացման գործակիցը (Ջինիի ինդեքսը)	0,359	0,360	0,381

Աղբյուր՝ ՎԿ

Ցավոք, մեթոդաբանության փոփոխության պատճառով, 2019թ. տվյալները, ըստ ՀՀ ՎԿ-ի, համադրելի չեն նախորդ տարիների տվյալների հետ, իսկ 2020 թվականի տվյալները սույն նյութի պատրաստման ժամանակ դեռևս չէին հրապարակվել (դրանք նախատեսվում է հրապարակել 2021 թվականի նոյեմբերի վերջին<sup>40</sup>): Սակայն աղքատության գծերի վերլուծության հիման վրա կարելի է արձանագրել, որ այնուամենայնիվ աղքատության մակարդակը չի բարելավվել, այլ հակառակը՝ վատթարացել է:

Այսպես, 2019-ին 2018թ. համեմատ զգալիորեն՝ շուրջ 1000 դրամով (24 827 դրամից 23 763) նվազել է ծայրահեղ աղքատության գիծը, այսինքն՝ 2018-ին 24 000 դրամով անձը չէր կարող ապահովել բնականոն գործունեության համար անհրաժեշտ նվազագույն էներգետիկ պահանջը<sup>41</sup> (ՆԷՊ), իսկ 2019թ. նույն գումարով կարող էր, այսինքն՝ 2018թ. ծայրահեղ աղքատության գիծը ավելի բարձր է եղել: Վերոհիշյալից նաև կարելի է ենթադրել, որ աղքատության մյուս գծերն էլ՝ ստորինը, միջինը և վերինը, 2019թ. նույնպես «էժանացել» են: Այսինքն, թեև 2019թ. աղքատության մակարդակը հաշվարկվել է միջին գծով, այնուամենայնիվ

<sup>38</sup> <https://armstat.am/file/doc/99521168.pdf>

<sup>39</sup> 2019թ. աղքատության ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների տվյալների հետ, քանզի հաշվարկված են ըստ աղքատության միջին գծի:

<sup>40</sup> <https://www.armstat.am/file/calendar/Kalendar21-am.pdf#page=40>

<sup>41</sup> **Նվազագույն էներգետիկ պահանջը** մարմնի բնականոն գործունեության և պահպանման համար բավարար սննդամթերքի միջոցով ստացվող էներգիան է (կիլոկալորիա): ՀՀ ժողովրդագրական առանձնահատկություններից ելնելով՝ 2019-ին մեկ անձի համար օրական միջին ՆԷՊ-ը հաշվարկվել է 2 307 կիլոկալորիայի (կկալ) չափով:

այն շատ մեծ տարբերություն չի կազմել նախորդ տարվա ստորին գծի հետ: Իսկ եթե հաշվի առնենք, որ եկամուտները 2019թ. ըստ էության պետք է բարձրանային (ըստ կառավարության խոստումների), ապա աղքատության մակարդակի բարձրացումը 2019թ. տարակուսելի է:

Անուղղակիորեն աղքատության մակարդակի աճի կամ կենսամակարդակի նվազման մասին են վկայում նաև ըստ քվինտիլային խմբերի<sup>42</sup> սպառված սննդամթերքի էներգետիկայի մասին տվյալները, սննդամթերքի վրա կատարված ծախսերը, ինչպես նաև սննդամթերքի հիմնական տեսակների սպառումը ամենացածր եկամուտներ ունեցող քվինտիլային խմբերում:

Աղյուսակ 14. Սպառված սննդամթերքի էներգետիկան մեկ շնչի հաշվով (օրական)<sup>43\*</sup>

Քվինտիլային խմբեր	Մեդիանան, կկալ		Միջինը, կկալ	
	2018	2019	2018	2019
Քվինտիլ 1	1 349	1 229	1 311	1 195
Քվինտիլ 2	1 703	1 554	1 706	1 553
Քվինտիլ 3	1 991	1 824	1 995	1 833
Քվինտիլ 4	2 356	2 182	2 364	2 201
Քվինտիլ 5	2 969	2 825	3 172	3 020

Աղբյուր՝ ՎԿ

\*Սույն նյութի պատրաստման ժամանակ ՎԿ կողմից դեռևս չէին հրապարակվել 2020թ. ցուցանիշները:

Ինչպես տեսնում ենք, բնակիչների սպառած սննդամթերքի էներգետիկան 2019 թվականին նվազել է: Եթե միջին կամ բարձր եկամուտներ ունեցող անձանց ավելի ցածր կալորիականությամբ սնվելը կարելի է բացատրել առողջ ապրելակերպով, ապա նույնը դժվար կլինի ասել ցածր եկամուտներ ունեցող խմբերի մասին:

Աղյուսակ 15. Սննդամթերքի վրա կատարված ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով՝ ըստ քվինտիլային խմբերի (միջին ամսական), ՀՀ դրամ<sup>44\*</sup>

Քվինտիլային խմբեր	2017	2018	2019
Քվինտիլ 1	7 747	8 917	7 153
Քվինտիլ 2	12 575	13 035	12 051
Քվինտիլ 3	16 372	16 633	16 868
Քվինտիլ 4	21 326	21 271	22 815
Քվինտիլ 5	35 815	34 233	38 005

Աղբյուր՝ ՎԿ

\*Սույն նյութի պատրաստման ժամանակ ՎԿ կողմից դեռևս չէին հրապարակվել 2020թ. ցուցանիշները:

<sup>42</sup>Տվյալ դեպքում բնակչությունը բաժանվել է 5 հավասար մասերի (20-ական %)՝ ըստ սպառման ծավալների: Առաջին խումբը՝ բնակչության ամենաքիչ սպառող (ամենաաղքատ) 20 տոկոսն է, իսկ 5-րդ խումբը՝ ամենամեծ ծավալներով սպառողը: Նույն տրամաբանությամբ բաժանվում են քվինտիլային խմբերի՝ ըստ եկամուտների:

<sup>43</sup> <https://armstat.am/am/?nid=82&id=2260>, <https://armstat.am/am/?nid=82&id=2407>

<sup>44</sup> [https://armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2021\\_5.pdf](https://armstat.am/file/article/f_sec_2_2021_5.pdf)

2019թ. 2018-ի համեմատ, 1-ին և 2-րդ խմբերում (այսինքն բնակչության համեմատաբար ամենաքիչ եկամուտներով 40%-ում) նվազել են նաև սննդամթերքի վրա կատարված ծախսերը:

*Աղյուսակ 16. Սննդամթերքի հիմնական տեսակների միջին ամսական սպառումը մեկ շնչի հաշվով 1-ին և 2-րդ քվինտիլային խմբերում<sup>45\*</sup>*

	Չափի միավոր	1-ին քվինտիլ			2-րդ քվինտիլ		
		2017	2018	2019	2017	2018	2019
Հաց, հացամթերք	կգ	9,65	9,28	9,40	10,43	10,15	10,01
Կարտոֆիլ	կգ	3,11	2,89	3,20	3,08	3,34	3,08
Բանջարեղեն	կգ	4,86	4,97	4,39	5,89	6,04	5,42
Միրգ, հատապտուղներ	կգ	1,98	2,23	1,81	2,84	2,98	2,70
Շաքար	կգ	0,32	0,32	0,26	0,38	0,41	0,29
Բուսական յուղ	լիտր	0,41	0,43	0,44	0,45	0,49	0,45
Միս, մսամթերք	կգ	1,20	1,18	1,05	1,45	1,66	1,64
Պանիր բոլոր տեսակների	կգ	0,62	0,59	0,69	0,77	0,73	0,73
Կաթ, մածոն	լիտր	1,42	1,34	1,45	1,68	1,55	1,31
Կարագ	կգ	0,06	0,04	0,03	0,07	0,08	0,07
Ձու	հատ	7,16	8,43	9,31	9,16	10,63	11,32
Ձուկ, ձկնեղեն	կգ	0,10	0,10	0,16	0,14	0,16	0,25

Աղբյուր՝ ՎԿ

\*Սույն նյութի պատրաստման ժամանակ ՎԿ կողմից դեռևս չէին հրապարակվել 2020թ. ցուցանիշները:

Ինչպես ենթադրում էինք, ամենացածր եկամուտներ ունեցող 1-ին և 2-րդ քվինտիլներում, 2019թ. 2018-ի համեմատ, սննդամթերքի սպառումը հիմնականում նվազել է, բացառությամբ 1-ին քվինտիլում մի քանի ապրանքատեսակի, այդ թվում՝ հացի և կարտոֆիլի, ինչը խոսում է այն մասին, որ կա՛մ այդ խմբերի բնակչության եկամուտները նվազել են, կա՛մ աճել են այդ ապրանքների գները, և նրանք դանդաղ անցում են կատարում հացին և կարտոֆիլին (քիչ հավանական է, որ սննդի պահանջարկն է նվազել):

Այստեղ հարկ ենք համարում ևս մեկ անգամ անդրադարձ կատարել առաջին անհրաժեշտության ապրանքների գների դինամիկային: Վերջին տարիներին, մինչև այս տարվա երկրորդ եռամսյակը, բրինձի գինն աճել է ընդհանուր առմամբ 25,9%-ով, այլուրը թանկացել է 23,6%-ով, հացը՝ 22,2%-ով, մակարոնեղենը՝ 18,4%-ով, թռչնամիսը՝ 32,3%-ով, ձուկը՝ 23,7%-ով, ձուն՝ 59,3%-ով, յուղերը և ճարպերը՝ 45,1%-ով, այլ սննդային յուղերը՝ 93,8%-ով, բանջարեղենը՝ 55,5%-ով, շաքարը՝ 53,4%-ով: Օրինակ<sup>46</sup>, հացի միջին մանրածախ գինը 2018-ի 447 դրամից հասել է 518 դրամի 2021թ. 2-րդ եռամսյակում, մակարոնեղենը՝ 491-ից 641, բրինձը՝ 776-ից 915, ձուն՝ 598-ից 829, բուսական յուղը՝ 713-ից 1298 և այլն:

Ինչ վերաբերում է 2020թ. տվյալներին, ապա դրանք դեռևս հրապարակված չեն, սակայն նախորդ ժամանակաշրջանի փորձը, ինչպես նաև COVID-19-ի և 44-օրյա պատերազմի

<sup>45</sup> [https://armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2021\\_5.pdf](https://armstat.am/file/article/f_sec_2_2021_5.pdf)

<sup>46</sup> [https://armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2021\\_2.pdf](https://armstat.am/file/article/f_sec_2_2021_2.pdf)



արդյունքները թույլ են տալիս վստահաբար պնդել, որ աղքատության ցուցանիշներն ավելի են վատթարացել:

Միաժամանակ, ըստ Համաշխարհային բանկի կողմից հրապարակված ցուցանիշների, աղքատության մակարդակը, որը հաշվարկվում է միջին եկամուտ ունեցող տնտեսությունների աղքատության շեմին համապատասխան (բնակչության այն մասը, որն ապրում է օրական 5,5 ԱՄՆ դոլարից ցածր եկամտով՝ 2011 թվականի գներով), Հայաստանում 2019 թվականին կազմել է 44%: Բանկը 2021 թվականի մարտին կանխատեսել էր նաև 2020 թվականի աղքատության այս մակարդակի աճ մինչև 51%<sup>47</sup>: Ցավոք, Համաշխարհային բանկը այս ուսումնասիրության պատրաստման պահին չէր հրապարակել թարմացված պաշտոնական տվյալներ, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել պատկերը 2020 թվականին:

Ինչ վերաբերում է Ջինի գործակցին, ապա 2018 և 2019 թվականներին<sup>48</sup> այն մեծացել է, այսինքն՝ եկամուտների բաշխման անհամաչափությունը խորացել է կամ ավելացել է անհավասարությունը, ինչը տարակուսելի է սոցիալական արդարություն հաստատելու խոստումներ տված կառավարության պարագայում:

Ամփոփելով վերոհիշյալը.

- Կարելի է փաստել, որ աղքատության հաղթահարման մասով խոստումները եղել են հավակնոտ. թե՛ 2019թ., թե՛ 2020թ. և առավել ևս ընթացիկ տարվա արդյունքներով, հաշվի առնելով կառավարության գործելաճը, ինչպես նաև COVID-19-ի և 44-օրյա պատերազմի հետևանքները, վստահաբար կարելի է պնդել, որ աղքատ բնակչության թիվը կաճի:
- Նկատվում է կենսամակարդակի անկում և աղքատության խորացում, ինչի մասին են խոսում, թե՛ աղքատության գծերի վերլուծությունը, թե՛ քվինտիլային խմբերի սպառած սննդամթերքի էներգետիկայի, կատարված ծախսերի և հիմնական տեսակների մասին տվյալները:
- Կարելի է կանխատեսել, որ 2021թ. կվատթարանան կենսամակարդակի և, ընդհանուր առմամբ, աղքատության մակարդակի ցուցանիշները: Նույնի մասին է վկայում Ջինի գործակիցը որը 2019թ. մեծացել է, այսինքն՝ եկամուտների բաշխման անհամաչափությունը խորացել է, և ավելացել է անհավասարությունը:

<sup>47</sup> <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35273/9781464816987.pdf?sequence=4&isAllowed=y>

<sup>48</sup> Այս նյութի պատրաստման ժամանակ (2021թ. սեպտեմբեր) 2020 թվականի տվյալները դեռևս չէին հրապարակվել ՀՀ ՎԿ կողմից:

## ՄԱՍ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ 2021Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անցնելով 2021թ. արտահերթ ընտրություններից հետո ներկայացված ծրագրի դրույթներին՝ նշենք, որ վերլուծության շրջանակներում մեզ հետաքրքրող խոստումները մի քանիսն են և վերաբերում են աղքատության կրճատմանը, աշխատավարձերի, կենսաթոշակների և սոցիալական որոշ վճարների բարձրացմանը: Նմանօրինակ մտադրություններ ամրագրված էին նախորդ ծրագրերում ևս, սակայն ինչպես տեսանք, հիմնականում՝ անարդյունավետ: Կփորձենք հասկանալ, թե որքանով են իրատեսական նոր խոստումները և արդյո՞ք հաշվի են առնվել նախկին սխալները:

### Աղքատություն

- 2026 թվականին **աղքատությունը կրկնակի կրճատվելու...** համար Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ է տարեկան ՀՆԱ 7%-ից ավելի աճ: Աճի այս ցուցանիշի ապահովման շնորհիվ էականորեն կբարձրանա մարդկանց կյանքի որակը, կաճեն եկամուտները, կավելանան աշխատատեղերը, կկրճատվի աղքատության մակարդակը<sup>49</sup>:
- **վերացնել ծայրահեղ աղքատությունը:**

Աղքատությունը կրկնակի կրճատելու, իսկ ծայրահեղ աղքատությունը վերացնելու մտադրությունը քննարկելուց առաջ հարկ ենք համարում մի փոքր անդրադառնալ դրա հիմնական աղբյուր ձևակերպված տնտեսական աճի տեմպերին:

Այսպես, կառավարությունը հայտարարում է, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալում է տարեկան ՀՆԱ 7%-ից ավելի աճ:

Նախ, հաշվի առնելով, որ պատերազմի արդյունքում կորցրել ենք զգալի մարդկային, ջրային, գյուղատնտեսական, օգտակար հանածոների և այլ ռեսուրսներ, ինչպես նաև ունենք արագացող տեմպերով արտագաղթ (միայն առաջին եռամսյակում Հայաստանը լքել ու չի վերադարձել ավելի քան 55 հազար մարդ), հասկանալի չէ, թե ինչ լրացուցիչ ռեսուրսների և մեզ անհայտ գործոնների հաշվին է պատրաստվում կառավարությունը ապահովել 7%-ից ավելի աճ: Հետաքրքիր է նաև, որ նման լավատեսություն կառավարությունը չունեք շատ ավելի լավ պայմաններում նախորդ ծրագիրը մշակելուց:

Նույնիսկ ՀՀ ԿԲ-ն այս տարվա համար կանխատեսել է 4,6%<sup>50</sup> տնտեսական աճ (պետք է հաշվի առնել նաև լոքդաունի պատճառով նախորդ տարի ձևավորված ցածր բազան), ինչը չի տեղավորվում ՀՀ կառավարության ծրագրով ակնկալվող ցուցանիշների շրջանակում: Ավելին, 2020թ. դեկտեմբերից մինչև 2021թ. հունիսն ընկած ժամանակահատվածում վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է 2,25 տոկոսային կետով, ինչը նույնպես չի նպաստի բարձր տնտեսական աճի ապահովմանը 2021-ին<sup>51</sup>: Հաջորդ տարիների համար 7%-ից ավելի աճն ավելի խնդրահարույց է դառնում, հատկապես, երբ ՀՀ ՖՆ

<sup>49</sup> ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշում:

<sup>50</sup> <https://hetq.am/hy/article/132180>

<sup>51</sup> <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q2.pdf>

կանխատեսումների համաձայն<sup>52</sup> 2021-ին ակնկալվում է 6,0% ՀՆԱ աճ, 2022-ին՝ 5,2%, 2023-ին՝ 3,7% և 2024-ին՝ 4,0%: Այս պարագայում ծրագիրը կատարելու համար 2025 և 2026 թվականներին պետք է լինի առնվազն տարեկան 12% աճ:

Միջազգային կառույցները նույնպես լավատես չեն մեր տնտեսական աճի հեռանկարներից: Այսպես, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կանխատեսումներով 2021-ին Հայաստանի ՀՆԱ աճը կանխատեսվում է 1%, իսկ 2022թ.՝ 3,5% (2021թ. ապրիլ ամսվա կանխատեսումներ)<sup>53</sup>: Համաշխարհային բանկը<sup>54</sup> կանխատեսում է 2021-ին՝ 3,4% ՀՆԱ աճ, 2022-ին՝ 4,3%, 2023-ին՝ 5,3% (2021թ. հունիսի կանխատեսում):

Ընդհանուր համաշխարհային միտումները նույնպես չեն խոսում այդպիսի բարձր տնտեսական աճի հնարավորության մասին: Համաշխարհային տնտեսության համար կանխատեսումները հետևյալն են. 2021թ.՝ 5,6% ՀՆԱ աճ, 2022թ.՝ 4,3%, 2023թ.՝ 3,1%: Ընդհանրապես, 7%-ից ավելի տնտեսական աճ մի քանի տարվա ընթացքում կանխատեսվում է միայն մի քանի ամենաաղքատ երկրների համար, որոնք սկսում են շատ ցածր մակարդակից և օգտվելու են արագ մեկնարկի էֆեկտից:

Ինչ վերաբերում է աղքատության մակարդակին, ապա 2019թ. տվյալներով այն շուրջ 26% է (2020թ. ցուցանիշները թերևս ավելի վատթարացած լինեն), այսինքն՝ հինգ տարում այն պետք է հասնի առնվազն 13%-ի: Հաշվի առնելով, որ նախորդ երեք-չորս տարում այս ոլորտում էական բարելավումներ չեն եղել, իսկ ակնկալվող բարձր տեմպերի տնտեսական աճը խիստ հարցական է, տվյալ խոստումը համարում ենք ոչ իրատեսական:

### **Աշխատավարձեր**

- **Ֆորմալ հատվածի ոչ պետական ոլորտի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ֆոնդը՝ ՀՆԱ-ի 25%,**
- **նվազագույն աշխատավարձը սահմանել 85 000 դրամ:**

Նախ՝ ոչ պետական հատվածի աշխատավարձերի ֆոնդի ցուցանիշը որպես կառավարության ծրագրի թիրախ ընդունելը տարակուսելի է, քանի որ այդ ցուցանիշը պաշտոնապես չի հրապարակվում ոչ ՀՀ ՎԿ, ոչ էլ այլ պետական կառույցի կողմից: ՀՀ ՎԿ կողմից Հայաստանի ազգային հաշիվները ժողովածուում հրապարակվում է միայն «վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» ցուցանիշը, որը ներառում է ոչ միայն ոչ պետական ֆորմալ հատվածը, այլ նաև ոչ պետական ոչ ֆորմալ և պետական ֆորմալ հատվածը:

Այս պատճառով հնարավոր չէ գնահատել ներկա իրավիճակը (այսօր քանի տոկոս է կազմում այս ցուցանիշը), համեմատել տարիների շարքերը ՀՀ-ում կամ այլ պետությունների հետ, ինչպես նաև հասկանալ թիրախին հասնելու իրատեսականությունը:

Մյուս կողմից՝ նշված չեն այն մեխանիզմները և գործիքները, որոնցով կառավարությունը պատրաստվում է ազդել մասնավոր հատվածի աշխատավարձերի, առավել ևս այլ վճարումների վրա և մեծացնել դրանք:

<sup>52</sup> [https://minfin.am/hy/page/mijnazhamket\\_kankhatesumner/](https://minfin.am/hy/page/mijnazhamket_kankhatesumner/)

<sup>53</sup> <https://www.imf.org/en/News/Articles/2021/04/21/pr21111-armenia-imf-staff-concludes-visit-to-republic-of-armenia>

<sup>54</sup> <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35647/9781464816659.pdf>

Միաժամանակ, եթե կառավարությունը որևիցե կոնկրետ գործիքներ է կիրառելու մասնավորի աշխատավարձերի բարձրացումը խթանելու համար, ապա թիրախներից դուրս են մնում ոչ ֆորմալ զբաղվածները, որոնց մեջ ներառվում են նաև գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները, որոնք Հայաստանում քիչ չեն, օրինակ՝ գյուղատնտեսության մեջ զբաղվածների մեծամասնությունը:

Ինչ վերաբերում է նվազագույն աշխատավարձի բարձրացմանը, ապա այն առնչվելու է միայն մինչև 85 000 դրամ ամսական զուտ աշխատավարձ ստացող վարձատրվող աշխատողներին, որոնք այնքան էլ շատ չեն ֆորմալ զբաղվածների շրջանում:

**Կենսաթոշակներ և այլ նպաստներ**

- Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը **հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին,**
- ժողովրդագրական իրավիճակի բարելավման համապատասխան մշակվելու է օրենքի նախագիծ՝ հստակ ամրագրելով ծնունդների խրախուսումներն ու բազմազավակ ընդհանրություններին տրամադրվող սոցիալական երաշխիքները, այդ թվում՝ **ընդհանրություններին 3-րդ և հաջորդ երեխաների համար մինչև 6 տարեկանը ամսական 50,000 դրամ ֆինանսական աջակցություն տրամադրելու ձևով:**

Պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին կենսաթոշակների հավասարեցնելը, կարծում ենք, կարևոր նախաձեռնություն է, սակայն հայտարարված չափերի բարձրացումները խնդրահարույց են: Ներկայումս նվազագույն կենսաթոշակի չափը 26 500 դրամ է, իսկ կենսաթոշակի միջին չափը 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ՝ 43 406 դրամ<sup>55</sup>: Միաժամանակ, պարենային զամբյուղի արժեքը 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ 37 861.9 դրամ է<sup>56</sup>, իսկ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 70 044.6 դրամ: Ստացվում է, որ նվազագույն կենսաթոշակը պետք է բարձրանա առնվազն 43%-ով, իսկ միջին կենսաթոշակը՝ շուրջ 61%-ով: Հարկ է նշել, որ պարենային զամբյուղի և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքները փոփոխական են և տարիների ընթացքում ավելանում են, այսինքն՝ հնարավոր է բարձրացումները ավելի զգալի պետք է լինեն:

Այս խոստման իրատեսականությունը հասկանալու համար պետք է հաշվի առնենք, որ՝

- ✓ Հայաստանը բնութագրվում է որպես բնակչության ծերացումով<sup>57</sup> երկիր, ինչը բերում է և բերելու է կենսաթոշակառուների քանակի ավելացմանը: Այսպես, օրինակ՝ 2019թ. սկզբին ՀՀ-ում թոշակառուների թվաքանակը 464,110 էր, 2020թ.՝ 464,595, իսկ 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ՝ 465,955,
- ✓ պետական պարտքի ցուցանիշը մտահոգիչ է՝ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2021թ. սկզբին կազմել է միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար բավական բարձր համարվող շուրջ 63%, ինչի պատճառով հետագայում ճնշումներ են լինելու պետական բյուջեի ծախսերի մասով և սեղմվելու է կենսաթոշակների բարձրացման հնարավորությունը, հատկապես այն դեպքում, երբ կառավարությունը տնտեսական աճի

<sup>55</sup> [https://armstat.am/file/article/sv\\_06\\_21a\\_550.pdf](https://armstat.am/file/article/sv_06_21a_550.pdf)  
<sup>56</sup> [https://armstat.am/file/article/sv\\_06\\_21a\\_6200.pdf](https://armstat.am/file/article/sv_06_21a_6200.pdf)  
<sup>57</sup> [https://armstat.am/file/article/gender\\_2020.pdf](https://armstat.am/file/article/gender_2020.pdf)

հավակնոտ տեմպեր է հայտարարել և պետք է ըստ տրամաբանության նաև ավելացնի պետական ներդրումները, այսինքն բյուջեի կապիտալ ծախսերը,

- ✓ նախորդ ծրագրով խոստացված կենսաթոշակների պարբերաբար բարձրացումները եզրափակվել են մեկանգամյա ավելացմամբ, այն էլ շուրջ 10%-ով,
- ✓ վերջապես, տնտեսական աճի տեմպերի ոչ իրատեսական ակնկալիքները չեն կարող նպաստել նման չափի բարձրացումներին:

Ինչ վերաբերում է ընտանիքներին 3-րդ և հաջորդ երեխաների համար մինչև 6 տարեկանը ամսական 50.000 դրամ ֆինանսական աջակցություն տրամադրելուն, ապա այս նախաձեռնությունը գնահատում ենք որպես և՛ դրական, և՛ իրատեսական:

Ամփոփելով կառավարության նոր ծրագրով խոստացված դրույթների ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ դրանց իրագործումը հիմնականում քիչ հավանական է: Այսպես՝

- ՀՆԱ-ի աճի տեմպերը, որի վրա հիմնվում են աղքատության նվազումը, աշխատավարձերի և կենսաթոշակների բարձրացումը, չափազանց լավատեսական են՝ 7%-ից ավելի տարեկան աճը իրատեսական չէ,
- նախորդ տարիների փորձը հուշում է, որ աղքատության մակարդակի բարելավումները չեն լինի հեղափոխական, այլ կընթանան լավագույն դեպքում ընդհանուր տնտեսական զարգացման տրամաբանության ներքո,
- նույնը կարելի է ասել կենսաթոշակների բարձրացման մասին, ավելի քան 60% աճը ներկա պայմաններում իրատեսական չէ,
- իսկ ոչ պետական հատվածի աշխատավարձերի բարձրացման հնարավորությունը կարելի կլինի գնահատել դրան ուղղված համապատասխան մեխանիզմների և գործիքների ներկայացման պարագայում:

### ՄԱՍ 3. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐԱԴՌՔՍԸ

Պետական հատվածի եկամուտների վերլուծությունն առանձին ուսումնասիրելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այս ոլորտում վերջին տարիներին տեղի են ունեցել բավականին հետաքրքիր, անգամ արտառոց զարգացումներ: Չնայած նրան, որ իշխանափոխությունը իրականացվել է պետական համակարգը օպտիմալացնելու, ավելորդ աշխատատեղերը կրճատելու կարգախոսներով, այն ոչ միայն չի փոքրացել, այլև ոլորտի եկամուտներն ավելացել են ոչ բնորոշ տեմպերով, այդ թվում՝ ճգնաժամային ժամանակահատվածներում, ինչն արտառոց երևույթ է միջազգային պրակտիկայում:

Աղյուսակ 18. Աշխատողների թվաքանակը 2017-2020թթ., մարդ<sup>58</sup>

	Ընդամենը				Պետական				Ոչ պետական			
	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Հունվար	494.307	509.549	560.612	600.340	201.734	198.200	200.121	197.711	292.573	311.349	360.491	402.629
Փետրվար	499.215	550.953	569.298	614.812	203.707	229.597	201.775	200.454	295.508	321.356	367.523	414.358
Մարտ	510.701	531.917	569.450	618.565	205.833	202.719	201.940	201.091	304.868	329.198	367.510	417.474
Ապրիլ	516.726	538.317	588.243	578.487	208.371	205.819	199.908	197.398	308.355	332.498	388.335	381.089
Մայիս	522.298	545.003	596.718	607.848	208.817	205.750	199.842	200.373	313.481	339.253	396.876	407.475
Հունիս	523.625	558.605	601.524	632.964	207.820	203.373	198.166	202.141	315.805	355.232	403.358	430.823
Հուլիս	521.250	568.600	603.017	632.591	201.360	199.983	196.182	200.671	319.890	368.617	406.835	431.920
Օգոստոս	519.750	571.362	602.373	635.414	198.025	196.957	193.690	198.216	321.725	374.405	408.683	437.198
Սեպտեմբեր	530.339	578.593	614.459	648.306	203.050	202.859	199.070	203.330	327.289	375.734	415.389	444.976
Հոկտեմբեր	533.141	582.093	620.552	639.091	204.471	204.414	200.717	201.925	328.670	377.679	419.835	437.166
Նոյեմբեր	535.552	585.895	624.763	632.313	207.037	206.703	203.584	203.108	328.515	379.192	421.179	429.205
Դեկտեմբեր	530.409	585.352	627.831	637.386	204.173	206.727	205.834	204.753	326.236	378.625	421.997	432.633

Աղբյուր՝ ՎԿ

Այսպես, 2018 թվականի ապրիլին պետական հատվածում ներգրավված է եղել **205819** մարդ, իսկ արդեն 2021թ. հունիս ամսվա դրությամբ պետական հատվածում ներգրավված աշխատողների թվաքանակը կազմել է **208051**<sup>59</sup>: Այսօր պետական հատվածում աշխատողների թվաքանակը կազմում է ընդհանուր գրանցված աշխատողների **չուրջ 1/3-ը**: Համեմատության համար<sup>60</sup>, նմանատիպ ցուցանիշը, օրինակ՝ Գերմանիայում կազմում է 11%, Իտալիայում՝ 13%, Էստոնիայում՝ 23%, Լատվիայում՝ 19%, Ռումինիայում՝ 17%, Հունաստանում՝ 17%, իսկ ԵՄ-ում ամենաբարձրը Շվեդիայում և Դանիայում է՝ համապատասխանաբար 28 և 29% (վերջին երկու երկիրը ընդգծված սոցիալական երկրներ են, ինչը չի կարելի ասել Հայաստանի մասին): ՀՀ կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ պետական հատվածը պետք է օպտիմալացվի և այն աշխատատեղերի ստեղծման աղբյուր չէ, իսկ տարբեր հիմնադրամներ փակվելու են: Սակայն վերջին տարիներին պետական համակարգը ոչ միայն չի օպտիմալացվել կամ փոքրացվել, այլ ավելի է մեծացել:

<sup>58</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_20a\\_142.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_20a_142.pdf)  
<sup>59</sup> [https://armstat.am/file/article/sv\\_07\\_21a\\_142.pdf](https://armstat.am/file/article/sv_07_21a_142.pdf)  
<sup>60</sup> [https://ec.europa.eu/eurostat/cache/digpub/european\\_economy/bloc-4d.html?lang=en](https://ec.europa.eu/eurostat/cache/digpub/european_economy/bloc-4d.html?lang=en)

Հաջորդ հարցը՝ պետական հատվածի աշխատավարձերի (եկամուտների) առաջանցիկ տեմպերով աճն է մասնավոր հատվածի աշխատավարձերի նկատմամբ: Թերևս դա հնարավոր կլիներ բացատրել նրանով, որ պետական համակարգում եկամուտները շատ ցածր են եղել և ոչ համապատասխան առկա տնտեսական պայմաններին, սակայն խնդրահարույց է դրանց բարձրացումը ոչ թե օրենքով սահմանված աշխատավարձի համընդհանուր բարձրացմամբ, այլ պարզազավճարների միջոցով, պարզազավճարների նշանակման մեթոդաբանությունը, չափը, ինչպես նաև դրանց տրամադրումը ճգնաժամային ժամանակահատվածներում:

Այսպես, ընդհանուր առմամբ, պետական հատվածի միջին անվանական ամսական աշխատավարձը 2019 և 2020թթ. աճել է համապատասխանաբար **8,4 և 5,3%-ով**, իսկ ոչ պետական հատվածում (որն իրականում և ապահովել է, օրինակ՝ 2019թ. 7,6% ՀՆԱ աճը) աշխատավարձերը բարձրացել են համապատասխանաբար **3,8 և 3,0%-ով**:

Մինչև պարզազավճարների չափերին անցնելը, հարկ ենք համարում անդրադարձ կատարել պետական պաշտոնյաների պարզաատրման սկզբունքներին և չափորոշիչներին: Աշխատանքի վարձատրության բարձրացման հիմնական գործոնը պետք է լինի արտադրողականության աճը: Ուստի, եթե կառավարությունը համարում է, որ պետական ծառայողների վարձատրությունը չի համապատասխանում իրենց արած գործին, արտադրողականությանը, ապա պարտավոր է ոչ թե սոցիալական աջակցություն տրամադրել պաշտոնյաներին պարզազավճարների տեսքով, այլ օրենքով սահմանված կարգով համընդհանուր բարձրացնել պետական ծառայողների աշխատավարձերը: Իսկ եթե այնուամենայնիվ ուզում է պարզազավճարների օգնությամբ տարբերակում դնել աշխատողների միջև և խթանել նրանց, ապա պետք է ունենա պարզաատրման գոնե ամենապարզ չափորոշիչներ կամ չափանիշներ:

Միջազգային պրակտիկայում ընդունված է, որ պետական պաշտոնյաների պարզաատրումը պետք է կապված լինի նրանց աշխատանքի արդյունավետության կամ արտադրողականության հետ, ինչի նպատակով մշակված են և կիրառվում են գնահատման տարբեր համակարգեր: Օրինակ, Հիմնական կատարողական ցուցանիշները (KPI, Key Performance Indicators) կամ Ցուցանիշների հավասարակշռված համակարգը (BSC, Balanced Scorecard), որոնցով հնարավոր է գնահատել և՛ աշխատողի արդյունավետությունը, և՛ աշխատանքի արդյունքները: Ամենակարևորը, գնահատման համակարգերը պետք է լինեն հասկանալի և ընկալելի աշխատողների համար, այլ ոչ թե պարզաատրումը տեղի ունենա կամայական և սուբյեկտիվ: Այս առումով, գնահատման ցուցանիշները պետք է բավարարեն 4C չափորոշիչներին՝ Clearness, Completeness, Complexity, Consistency, ինչպես նաև SMART (Specific, Measurable, Achievable, Relevant, Time-certain) մոտեցմանը: Մեր տվյալներով ՀՀ կառավարման համակարգում պարզաատրումները չեն իրականացվում որևիցե նշված կամ այլ համակարգին համապատասխան:

Ինչ վերաբերում է պարզազավճարների չափին, ապա այս հարցում նույնպես չկա հստակություն՝ կառավարությունը հստակ ամփոփ տվյալներ չի հրապարակում, երբեմն անդրադառնում է հարցին այս կամ այն պաշտոնյայի շուրթերով, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն էլ իրենց հարցումների միջոցով ստանում են տեղեկատվություն պետական մարմիններից, հրապարակում տվյալներ, որոնք հաճախ չեն ընդունվում պետության կողմից:

Այնուամենայնիվ, ըստ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյանի՝ 2020 թվականին պետական կառավարման համակարգի աշխատավարձի ֆոնդը կազմել է 65,5 միլիարդ դրամ և բաժանվել է մոտավորապես դրա 30 տոկոսի չափով՝ 22 միլիարդ դրամի պարգևավճար, այսինքն՝ 45 միլիոն դոլար<sup>61</sup>: Ըստ Antifake<sup>62</sup> կայքի (կայքում զետեղված է ամբողջական ցանկը և հարցումների պատճենները)՝ 2020 թվականին պետական ապարատում պարգևավճարների ընդհանուր չափը կազմել է 37.726.518.339 դրամ, որը համարժեք է 78,6 միլիոն ԱՄՆ դոլարին: Միաժամանակ, 2019-ին պարգևավճարների ընդհանուր չափը կազմել է 34.759.381.910 դրամ: Իսկ 2018 թվականին՝ իշխանավորությունից հետո մինչև տարվա վերջ, պետական ապարատում պարգևավճարների ընդհանուր չափը կազմել է 15.744.577.969 դրամ: Ընդհանուր առմամբ, վերջին տարիների պարգևավճարների չափը կազմել է շուրջ 98,3 մլրդ դրամ, որը համարժեք է շուրջ 1,5 տարվա պետական կառավարման համակարգի աշխատավարձի ֆոնդին:

Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ պետական ապարատի օպտիմալացման դեպքում՝ օգտագործելով այս գումարները, հնարավոր կլիներ զերծ մնալ անհասկանալի գործընթացներից և էականորեն բարձրացնել պետական կառավարման համակարգի վարձատրությունը, իսկ պարգևավճարները օգտագործել որպես կետային, խթանող բնույթ ունեցող խրախուսանք:

Սակայն ամենակարևոր խնդիրը և պարադոքսը նրանում է, որ պետական հատվածի պարգևավճարները ռեկորդային չափերով տրվել են ճգնաժամային 2020-ին, այսինքն տնտեսական, սոցիալական և ռազմաքաղաքական ցուցանիշների բոլոր նվազումների, անկումների և կորուստների հետ մեկտեղ, այս ցուցանիշը այնուամենայնիվ դրսևորում է նախանձելի աճ: Այս դեպքում, կարծում ենք, չի կարող խոսք գնալ պետական համակարգի արդյունավետության կամ արտադրողականության աճի մասին:

Ընդ որում, նույն ժամանակահատվածում, ամբողջ աշխարհի մակարդակով, կառավարությունները ոչ միայն չեն բարձրացրել կամ տվել համատարած պարգևավճարներ, այլև բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պաշտոնյաները, կառավարությունները հրաժարվել են ոչ միայն պարգևավճարներից (նշենք նաև, որ պարգևավճարները այլ երկրներում տրվում են միայն լավ աշխատանքի կամ արտակարգ ձեռքբերումների համար), այլև աշխատավարձից: Ավելին, Արժույթի միջազգային հիմնադրամը COVID-19-ի հետևանքները մեղմելուն ուղղված հատուկ հրապարակումների շարքում անդրադարձել է նաև պետական ծառայողների **աշխատավարձերի նվազեցման անհրաժեշտությանը**<sup>63</sup>՝ ճգնաժամի ընթացքում ծախսերի վերաբաշխման նպատակով: Նույն հոդվածում նշվում է, որ բազմաթիվ երկրներ արդեն իսկ կրճատել են պետական համակարգի աշխատավարձերը, շատերը պատրաստվում են կրճատել, այդ միջոցը կիրառվել է նախկինում ճգնաժամերի ընթացքում և,

<sup>61</sup> <https://www.azatutyun.am/a/31290034.html>  
<sup>62</sup> <https://www.panorama.am/am/news/2021/04/26/204-%D5%B4%D5%AB%D5%AC%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%A4%D5%B8%D5%AC%D5%A1%D6%80-%D5%BA%D5%A1%D6%80%D5%A3%D6%87%D5%A1%D5%BE%D5%B3%D5%A1%D6%80-%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/2492181>  
<sup>63</sup> <https://www.imf.org/-/media/Files/Publications/covid19-special-notes/enspecial-series-on-covid19issues-when-cutting-government-pay-to-help-reshuffle-spending-in-a-crisis.ashx>



ի թիվս այլոց, խորհուրդ է տրվում կառավարություններին, հատկապես պետական պարտքի բարձր մակարդակ ունեցող երկրներում, նույնպես միանալ վերոհիշյալ քայլին:

Այսպիսով, կարելի է փաստել, որ՝

- վերջին տարիներին պետական համակարգը ոչ միայն չի օպտիմալացվել, այլ ավելի է մեծացել: Ներկայումս պետական հատվածում աշխատողների թվաքանակը կազմում է ընդհանուր գրանցված աշխատողների **շուրջ 1/3-ը**,
- պետական համակարգում եկամուտները աճել են առաջանցիկ տեմպերով՝ մասնավոր հատվածի համեմատությամբ, անգամ 2020թ. միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 5.3%-ով,
- եկամուտների աճը ապահովվել է պարզևավճարների հաշվին, որոնք ոչ լրիվ երեք տարում կազմել են շուրջ 98.3 մլրդ դրամ, որը համարժեք է շուրջ 1.5 տարվա պետական կառավարման համակարգի աշխատավարձի ֆոնդին,
- պարզևավճարները չեն տրվել կոնկրետ չափորոշիչներով՝ գնահատված արտադրողականության կամ արդյունավետության աճի հիման վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով իշխանափոխությունից հետո ՀՀ բնակչության եկամուտների մակարդակի փոփոխությունների, պատճառների և կենսամակարդակի վրա դրանց ազդեցության վերլուծությունը, ինչպես նաև այս ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը, խոստումները և իրական արդյունքների ուսումնասիրությունը՝ կարող ենք եզրակացնել հետևյալը.

- Ոլորտի վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ վերջին տարիներին որևիցե էական բարելավումներ դիտարկվող ցուցանիշներում չեն արձանագրվել:
- ՀՀ կառավարությունը, մեծ հաշվով, հատուկ քաղաքականություն չի վարել բնակչության եկամուտների բարձրացման մասով՝ հիմնական հույսը դնելով տնտեսական աճի վրա:
- Կառավարության հայտարարված արժանապատիվ եկամուտներ ապահովելու դրույթը չափելի չէ, իսկ մասնավոր հատվածի աշխատավարձերը բարձրացնելու նպատակը՝ անհասանելի:
- Եկամուտները և աշխատավարձերը էական աճ չեն գրանցել: Նվազել են աշխատանքային եկամուտները և ծառայությունների վրա սպառողական ծախսերը (շուրջ 10%), ինչը կարող է խոսել բնակչության կենսամակարդակի անկման մասին:
- Բացասական միտումներ են գրանցվել նաև արտերկրից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումներում: Նվազել է զուտ ներհոսքը, հատկապես ՌԴ-ից, մեծացել են արտահոսքի տեմպերը (2019 թվականին հասնելով շուրջ 1.5 մլրդ դոլարի), ինչը դրականորեն չի բնորոշում ՀՀ տնտեսական հեռանկարները:
- Աշխատավարձերի համեստ աճը, հիմնականում պետական հատվածի աշխատավարձերի հաշվին, մեծ հաշվով չեզոքացվել է վերջին շրջանում գնաճի ահագնացող տեմպերով, հատկապես՝ առաջին անհրաժեշտության ապրանքների մասով: Կտրուկ աճել են բրնձի, շաքարի, հացի, ձվի, բանջարեղենի, թոչնամսի, յուղերի և այլ կարևորագույն

ապրանքների և ծառայությունների գները, որոնք անմիջականորեն ազդում են բնակչության գերակշիռ մասի կենսամակարդակի վրա:

- Կենսաթոշակները բարձրացել են միայն մեկ անգամ (չնայած, ըստ կառավարության խոստումների. պետք է պարբերաբար բարձրացվեին), բարձրացումն էլ կազմել է միջին հաշվով շուրջ 10%: Նույն չափով աճել են նաև որոշ նպաստներ, սակայն 2020թ. աճել է նպաստառուների քանակը, ինչը կարող է վկայել բնակչության ընդհանուր սոցիալական վիճակի վատթարացման մասին: Միաժամանակ, անփոփոխ են մնացել հաշմանդամության նպաստները և կրթաթոշակները:
- Կենսաթոշակների և նպաստների մեկանգամյա բարձրացումը չի ծածկել անգամ գնաճի ազդեցությունը, ուստի խոցելի խավերի կենսամակարդակը անկում է ապրել և կառավարության խոստումը կարելի է համարել չկատարված:
- Աղքատության հաղթահարման մասով խոստումները նույնպես եղել են հավակնոտ: Սակայն վերջին տարիներին գրանցված տնտեսական աճի ոչ այնքան բարձր տեմպերը, սիմվոլիկ բարձրացված կենսաթոշակները, եկամուտների չափավոր աճը և առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների գների էական բարձրացումը բացասական ազդեցություն են ունեցել աղքատության մակարդակի վրա: Թե՛ 2019թ., թե՛ 2020թ. և առավել ևս ընթացիկ տարվա արդյունքներով, հաշվի առնելով կառավարության գործելաճը, ինչպես նաև COVID-19-ի և 44-օրյա պատերազմի հետևանքները, Համաշխարհային բանկի կանխատեսմամբ, կարող են նպաստել աղքատության մակարդակի բարձրացմանը և աղքատ բնակչության թվի աճին:
- Կենսամակարդակի անկման և աղքատության խորացման մասին են խոսում թե՛ աղքատության գծերի վերլուծությունը, թե՛ քվինտիլային խմբերի սպառված սննդամթերքի էներգետիկայի, կատարված ծախսերի և հիմնական տեսակների մասին տվյալները: Բնակիչների սպառած սննդամթերքի էներգետիկան նվազել է, աճել է հացի և կարտոֆիլի սպառումը: Նույնի մասին է վկայում Զինի գործակիցը, որը 2019թ. մեծացել է, այսինքն՝ եկամուտների բաշխման անհամաչափությունը խորացել է, և ավելացել է անհավասարությունը՝ ամենաապահով բնակչության եկամուտները մեկ շնչի հաշվով 17,3 անգամ գերազանցել են ամենաքիչ ապահովված 10% բնակչության եկամուտները:
- Էականորեն աճել են պետական համակարգում ներգրավված անձանց եկամուտները, ինչը հիմնականում ապահովվել է պարզևավճարների հաշվին, որոնք ոչ լրիվ երեք տարում կազմել են շուրջ 98.3 մլրդ դրամ: Այս ամենի հետ մեկտեղ, այդ պարզևավճարները չեն տրվել կոնկրետ չափորոշիչներով գնահատված՝ արտադրողականության կամ արդյունավետության աճի հիման վրա: Անհասկանալի է հատկապես այս մոտեցմամբ պարզևավճարների տրամադրումը ճգնաժամային համարվող 2020 թվականին, երբ գումարների մեծ մասը կարող էր ուղղվել ճգնաժամի կառավարմանը և տնտեսական, սոցիալական ու այլ ցուցանիշների բարելավմանը:
- 2021թ. արտահերթ ընտրություններից հետո ձևավորված կառավարության նոր ծրագրով խոստացված դրույթների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջինների իրագործումը հիմնականում քիչ հավանական է՝
  - ՀՆԱ-ի աճի տեմպերը, որի վրա հիմնվում են աղքատության նվազման, աշխատավարձերի և կենսաթոշակների բարձրացման նպատակադրումները,

չափազանց լավատեսական են, իսկ ՀՆԱ-ի 7%-ից ավելի տարեկան աճը՝ ոչ իրատեսական,

- նախորդ տարիների փորձը հուշում է, որ աղքատության մակարդակի բարելավումները չեն լինի հեղափոխական, այլ կրնան անսահման լավագույն դեպքում ընդհանուր տնտեսական զարգացման տրամաբանության ներքո,
- նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերի հավասարեցումը պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին ևս իրատեսական չէ, քանի որ դա ենթադրում է նվազագույն կենսաթոշակի բարձրացում առնվազն 43%-ով, իսկ միջին կենսաթոշակը՝ շուրջ 61%-ով,
- ֆորմալ հատվածի ոչ պետական ոլորտի աշխատավարձերի բարձրացման խոստման իրականացման հնարավորությունը հնարավոր կլինի գնահատել միայն այդ ցուցանիշի վերջին տարիների համապատասխան տվյալների հրապարակման, ինչպես նաև դրան ուղղված համապատասխան մեխանիզմների և գործիքների ներկայացման պարագայում:

**Ավարտելով՝ կարող ենք արձանագրել, որ կառավարությունը իշխանափոխությունից հետո հաստատված ծրագրերի խոստումները չի կատարել՝ ՀՀ բնակչության կենսամակարդակը անկում է ապրել: Իսկ 2021թ. արտահերթ ընտրություններից հետո չի քաղել համապատասխան դասեր նախորդ անհաջող փորձից և խոստացել է ոչ իրատեսական բարելավումներ: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ այս ոլորտում կառավարության աշխատանքը կարելի է գնահատել անբավարար:**

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: